# Ազգ
Azg

25 ՅՈՒՆԻՍ 2011 ՇԱԲԱԹ 117(4736)

ISSN: 1829-1651


# Կաթողիկոսը հովվապետական այցով կմեկնի Սանկտ Պետերբուրգ եւ Ռիգա

**Հունիսի 27-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը քառօրյա հովվապետական այցով կմեկնի Սանկտ Պետերբուրգ (Ռուսաստանի Դաշնություն) եւ Ռիգա (Լատվիայի Հանրապետություն): Մայր աթոռից հայտնում են, որ Սանկտ Պետերբուրգում Նորին Սրբությունը ներկա կգտնվի հայ համայնքի 300-ամյակին նվիրված միջոցառումներին: Սալտիկով-Շչեդրինի անվան ազգային գրադարանում Ամենայն հայոց կաթողիկոսը կբացի «Հայ-ռուսական հոգեւոր կապեր» խորագրով հայկական գրքերի ցուցահանդեսը, ինչպես նաեւ կնախագահի Սանկտ Պետերբուրգի «Հայ-ռուսական բարեկամության» մշակութային կենտրոնի օրհնության եւ բացման արարողությունը: Հունիսի 29-ին Գարեգին Բ Վեհափառ հայրապետը կմեկնի Ռիգա, ուր հունիսի 30-ին կհանդիսապետի Ռիգայի Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցու օծման արարողությունը, հայրապետական իր օրհնությունը կբաշխի Լատվիայում բնակվող հայորդիներին: Այցի ընթացքում Նորին Սրբությանն ուղեկցելու են Մայր աթոռի հրատարակչական բաժնի տնօրեն Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը, Մայր աթոռի դիվանապետ Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը, գավազանակիր Անանիա աբեղա Ծատուրյանը եւ տեղեկատվական համակարգի տնօրեն Վահրամ քահանա Մելիքյանը:**

Հ. Ա.

# Կազանում մկնիկ անգամ չծնվեց...

## *Եթե կողմերից մեկը շտապում է զորահանդեսի՝ «իրար մոտ լինելն էլ» չի օգնի*



Երբ հաշվի ենք առնում, որ մեծ քաղաքականությունում մանրուքներ չեն լինում, ապա մանրուք չէ նաեւ այն հանգամանքը, որ երեկ Կազանի Կրեմլում, որտեղ ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւն ընդունել էր Հայաստանի ու Ադրբեջանի նախագահներին՝ պատվիրակություններով, դիմելով ադրբեջանական պատվիրակությանը Մեդվեդեւն ասել է. «Կարող եք ժպտալ, այստեղ լրագրողներ են...»:

Այժմ՝ մանրուքներից տեղափոխվենք իրականություն, իսկ իրականությունն այդ՝ «տապալված» Կազանն է: Կողմերը՝ նախագահներն արտգործնախարարների հետ միասին, երեք ժամից ավելի տեւած բանակցություններից հետո, որը Մեդվեդեւը սկսեց. «Որպեսզի հասնենք արդյունքի, պետք է իրար մոտ լինել» արտահայտությամբ, հանդես եկան ընդամենը հետեւյալ հայտարարությամբ. «Երկրների ղեկավարները փոխըմբռնում արձանագրեցին մի շարք հարցերի շուրջը, որոնց լուծումը կնպաստի հիմնարար սկզբունքների ընդունման համար նախադրյալների ստեղծմանը»: Նույն փաստաթղթի համաձայն՝ հանդիպման մասնակիցները քննարկել են հիմնարար սկզբունքների համաձայնեցման նպատակով տարվող աշխատանքների ընթացքը: Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները երախտագիտություն են հայտնել Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի նախագահներին՝ «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի նկատմամբ մշտական ուշադրության համար»: Նրանք բարձր են գնահատել ՌԴ նախագահի ներդրած ջանքերը:

Այժմ, եթե վերհիշենք, թե ինչ ակնկալիքներ կային ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներում, եվրոպական տարբեր ատյաններում այս հանդիպումից, եւ նորից վերընթերցենք այս հայտարարությունը, ապա միանշանակ է՝ Կազանը կամ «հաջողված գովազդային արշավ էր», կամ կողմերից մեկի ոչ կառուցողականության դրսեւորում: Ու, ամենայն հավանականությամբ հենց այն կողմի, որը «ժպտում է այնտեղ, որտեղ լրագրողներն են»:

Բացի այդ, չմոռանանք, որ Ալիեւ կրտսերը, ընդամենը Կազանի հանդիպման նախորդ օրը՝ «Եվրոնյուզին» տված հարցազրույցում շեշտեց, որ իր երկիրը չի պատրաստվում որեւէ բան տալ «իր երկրին պատկանող» տարածքը վերադարձնելու դիմաց. սա փաստացի արդեն հուշում էր՝ Կազանում բանակցությունները անհաջողության են դատապարտված, ու հենց՝ Բաքվի կողմից, որտեղ հիշեցնենք՝ հունիսի 26-ին, ադրբեջանական բանակը զորահանդեսի ընթացքում ամբողջ աշխարհին կցուցադրի իր ողջ «հմայքը»:

Հ. ԱՓՅԱՆ

# Արթուր Բաղդասարյանի գլխավորած պատվիրակությունը մեկնեց Իրան

**Հունիսի 24-ին երկօրյա աշխատանքային այցով Իրանի Իսլամական Հանրապետություն է մեկնել ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանի գլխավորած պատվիրակությունը: Պատվիրակության կազմում են ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար, հայ-իրանական միջկառավարական համատեղ հանձնաժողովի համանախագահ Արմեն Մովսիսյանը, փոխնախարար Իոսիֆ Իսայանը, ԱԱԽ աշխատակազմի ղեկավար Արտաշես Ավոյանը եւ արտաքին անվտանգության վարչության պետ Միշա Մելքոնյանը: ԻԻՀ-ում գտնվելու ընթացքում Արթուր Բաղդասարյանը կմասնակցի Ահաբեկչության դեմ պայքարի միջազգային համաժողովի աշխատանքներին, որի ընթացքում հանդես կգա «Ահաբեկչության դեմ գլոբալ պայքարի հիմնախնդիրները» թեմայով ելույթով: Նախատեսված են հանդիպումներ ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի եւ Ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղար Սաիդ Ջալիլիի հետ:**

*ԱԱԽ մամուլի գրասենյակ*

# Ուժեղ երկրաշարժ Ալեուտյան կղզիներում



Երեկ առավոտյան 7,4 մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժ է տեղի ունեցել Խաղաղ օվկիանոսի հյուսիսում՝ Ալեուտյան կղզիների շրջանում, Ալյասկայի ափերից 170 կմ հեռավորության վրա: ԱՄՆ երկրաբանական ծառայության տվյալներով, երկրաշարժի էպիկենտրոնը եղել է 40 կմ խորության մեջ:

Մոտավորապես կես րոպե անց նույն խորության մեջ արձանագրվել է դարձյալ 7,4 մագնիտուդով ցնցում: Զոհերի եւ ավերածությունների մասին հաղորդումներ չկան, նշում է BBC-ն:

Նման ուժգնության երկրաշարժը կարող է ցունամի առաջացնել: Երեկ Ալեուտյան կղզիների երկու ցնցումներից հետո ԱՄՆ արեւմտյան ափին ցունամիի վերաբերյալ նախազգուշացում արվեց, որն ավելի ուշ չեղյալ հայտարարվեց:

Նախազգուշացումը սովորաբար նշանակում է, որ ափի մոտակայքում կամ ցածրադիր վայրերում գտնվող բոլոր բնակիչները պարտավոր են անհապաղ պատսպարվել բարձրադիր վայրերում:

ՌԴ արտակարգ իրավիճակների նախարարության Կամչատկայի երկրամասի գլխավոր վարչության տվյալներով, Ալեուտյան կղզիների երկրաշարժը Ռուսաստանի խաղաղօվկիանոսյան ափին չի սպառնում:

Պ. Ք.

# Հայ թմրամոլները շատանում են, տարիքը՝ երիտասարդանում



ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Անհնար է մի քանի ժամվա ընթացքում կամ մի քանի բժշկական կուրսերի օգնությամբ բուժվել թմրամոլությունից: Տեսակետը Հարավային Կովկասի սահմանների համալիր կառավարման ծրագրի հայաստանյան գրասենյակի ղեկավար Գրիգոր Մալենցյանինն է: Նրա գնահատմամբ՝ թմրամիջոցներից կախվածությունը ոչ միայն ֆիզիկական է, այլեւ հոգեբանական:**

**«Երբ հարցնում են, թե քանի օր է անհրաժեշտ, որպեսզի բուժվեն, միշտ նույն օրինակն եմ բերում: Թմրամոլներն առաջին հերթին սիրահարված են ներարկիչին, նրանք ապրում են ներարկիչով, պաշտում այն: Երբ դուք սիրահարված եք, ձեզ քանի՞ օր է հարկավոր, որպեսզի մոռանաք ձեր սիրելիին ու ձեր սերը: Երկար ժամանակ եւ ուժեղ կամք», երեկ եզրակացրեց Մալենցյանը «Հենարան»-ում:**

**Նարկոլոգիական կենտրոններում որոշակի ժամանակահատվածով բուժումից հետո հիվանդը դուրս է գալիս կատարելապես ապաքինված: Նա առողջ է, օրգանիզմը՝ մաքուր: Ապագայում միայն իրենից է կախված՝ շարունակել օգտագործել թմրանյութ, թե՞ հրաժարվել նրանից: Եթե որոշում է հրաժարվել թմրանյութից, ապա նրան անհրաժեշտ է ոչ միայն ընտանիքի եւ ընկերների աջակցությունը, այլեւ հասարակության դրական վերաբերմունքը:**

**«Պետք է գիտակցել՝ թմրամոլը քրոնիկ հիվանդ է, եւ նրանից երես թեքելու փոխարեն անհրաժեշտ է ձեռք մեկնել եւ օգնել»: Մալենցյանը հավելում է, որ նախկին թմրամոլների հանդեպ հասարակության վերաբերմունքը բացասական է: «Գործատուները խուսափում են աշխատանքի ընդունել, երբ պարզում են, որ դիմորդը նարկոլոգիական կենտրոնում բուժվել է:**

*Տես էջ 3*

# Թուրքիան ու Հայաստանը իբր բանակցել են 3 թե 5 շրջան վերադարձնելու շուրջը

## *Ըստ ԵԽԽՎ նախագահ Մեւլութ Չավուշօղլուի՝ Ադրբեջանը միշտ չէ, որ խոսում է ռազմական լուծումից*

***«Ազգի» հարցազրույցը Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ, Թուրքիայի իշխող «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության ներկայացուցիչ Մեւլութ Չավուշօղլուի հետ:***

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ստրասբուրգ, Ֆրանսիա

**- Պրն Չավուշօղլու, այս շաբաթ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը ելույթ ունեցավ վեհաժողովում, նաեւ հանդիպեց Ձեզ հետ: Ինչպիսի՞ն է ձեր տպավորությունը նախագահի հետ հանդիպումից:**

- Հիմնականում մենք քննարկեցինք, թե ինչ ենք մենք անում այստեղ եւ բարեփոխումների ընթացքը Հայաստանում: Մենք ողջունեցինք երկխոսությունը Հայաստանում իշխանությունների եւ ընդդիմության միջեւ՝ ողջունելով նաեւ համաներումը, որ հայտարարել է Հայաստանի նախագահը: Հանդիպումն, ընդհանուր առմամբ, դրական մթնոլորտում էր: Իհարկե, մենք չհամաձայնեցինք ղարաբաղյան հարցով վեհաժողովի ենթահանձնաժողովի առնչությամբ, ինչը վեհաժողովի որոշումն է եւ բյուրոյի: Կարեւոր չէ, դա ձեզ դուր է գալիս, թե ոչ, դուք պետք է հարգեք դա: Ճիշտ չէ նաեւ ասել, թե առանց հայաստանյան պատվիրակության այդ հանձնաժողովն անիմաստ է: Սա Թուրքիայի պատվիրակի նախագահության նախաձեռնությունը չէ, այլ վեհաժողովի բյուրոյի միաձայն որոշումը: Ես հասկանում եմ, որ Հայաստանը բավարարված չէ, բայց նա պետք է մասնակցություն ունենա հանձնաժողովում, այն ոչ Հայաստանի, ոչ էլ Ադրբեջանի դեմ է:

**- ԵԱՀԿ Մինսկի խումբն անգամ բազմիցս հայտարարել է, որ բարենպաստ չեն այս ձեւաչափից դուրս քննարկումները, քանի որ դրանք կարող են մեծացնել լարվածությունը:**

- Այս ենթահանձնաժողովը չի վնասում ոչ մի գործընթացի: Ենթահանձնաժողովի նպատակը Մինսկի խմբի արածը կրկնելը չէ, այլ նպատակ ունի քննարկել մարդասիրական հարցերն ու նպաստել երկխոսությանը կողմերի միջեւ: Քաղաքական հարցերը քննարկվում են Մինսկի խմբի շրջանակներում, դա մենք հասկանում ենք, բայց վեհաժողովը չի կարող աչք փակել նրա վրա, թե ինչ է տեղի ունենում իր անդամ երկրներում կամ դրանց միջեւ:

**- Պրն նախագահ, Դուք համարվում եք ղարաբաղյան հարցով ենթահանձնաժողովի վերակենդանացման կամ աշխուժացման հիմնական նախաձեռնողն ու աջակիցը: Ի՞նչ եք կարծում, հունվարին Ձեր նախագահության ավարտով կարո՞ղ են ենթահանձնաժողովի գործունեության ակտիվացման ջանքերը ավարտվել, թե այն կշարունակի կենդանացման փորձեր անել:**

*Տես էջ 5*

ԱԶԳ

# Ընթացիկ

# «Արդյունաբերությունը կդառնա տնտեսության շարժիչ ուժը»

## Հավաստիացրեց էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանը

Էկոնոմիկայի նախարար **Տիգրան Դավթյանը** երեկ տեղի ունեցած իր մամուլի ասուլիսը սկսեց՝ տեղեկացնելով նախարարության եւ նրան ենթակա գործակալություններում կատարված կառուցվածքային եւ կադրային փոփոխությունների մասին, որից հետո անդրադարձավ մակրոտնտեսական ցուցանիշներին:

Նախարարը գոհունակություն հայտնեց մայիս ամսվա տնտեսական ակտիվության 9,9 տոկոս եւ հատկապես արդյունաբերության 25 տոկոս աճից: Սակայն նա չցանկացավ «շատ ոգեւորվել» թվային ցուցանիշներով, քանի որ դրանց հաշվարկման մեթոդաբանությունն է փոխվել: Այնուամենայնիվ, Տիգրան Դավթյանը հայտնեց, որ արդյունաբերության միջին ամսական աճը կազմում է 10-11 տոկոս, ինչը նշանակում է, որ այս տարվա ընթացքում արդյունաբերությունը կլինի մեր տնտեսության «շարժիչ ուժը եւ լոկոմոտիվը»: Նման դրական դինամիկան նախարարը համարեց վերջին երկու-երեք տարիների ընթացքում կառավարության ձեռնարկած քայլերի արդյունք, ավելացնելով, որ մինչեւ տարեվերջ կունենանք նոր ձեռնարկություններ եւ արդյունաբերական արտադրանքի նոր ծավալներ:

Տիգրան Դավթյանն ընդգծեց, որ կառավարությունն ակտիվ աջակցում է թե՛ կոնկրետ ձեռնարկություններին, թե՛ ճյուղերին, որն արտահայտվում է ոչ միայն ավելացված արժեքի հարկի վճարման հնարավորություն տալով: Միայն այս արտոնության շնորհիվ տնտեսության իրական հատվածում կկատարվեն 72 մլրդ դրամի ներդրումներ եւ ի թիվս արդեն ստեղծված մոտ 10 նոր ձեռնարկությունների, որոնք թվարկեց նախարարը, կստեղծվեն այլ նոր ձեռնարկություններ եւս:

Պետական աջակցության այլ տեսակ է ազատ տնտեսական գոտիների ստեղծումը: Նախատեսվում է ստեղծել երեք այդպիսի գոտի՝ «Զվարթնոց» օդանավակայանում՝ ագրոուղղվածություն ունեցող, «Մարու»



ARMENPRESS

գործարանի հենքի վրա, որի բանակցությունները կավարտվեն մեկ-երկու ամսից, եւ բարձր տեխնոլոգիաների ոլորտի համար՝ հավանաբար «Էյ Փի Ջի Լեփս» ընկերության բազայի վրա:

Էկոնոմիկայի նախարարն անդրադարձավ նաեւ գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ կատարված աշխատանքներին (որոնց մանրամասները բազմիցս ներկայացրել ենք մեր թերթում) եւ հայտնեց, որ առաջիկայում սպասվում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» օրենքում փոփոխություններ կատարել, ինչի շնորհիվ կսահմանափակվեն անհիմն ստուգումները եւ անցում կկատարվի ռիսկի վրա հիմնված ստուգումներին:

Տարեկան մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսման մասին հարցին պատասխանելով՝ Տիգրան Դավթյանն ասաց, որ առնվազն բյուջեով նախատեսված 4,6 տոկոս տնտեսական աճ կունենանք եւ «մի քիչ էլ ավելի»: Գնաճի ցուցանիշը նույնպես, նրա կարծիքով, մինչեւ տարեվերջ կնվազի:

«Արդյունաբերությունը զարգանում է միայն հանքարդյունաբերությա՞ն շնորհիվ» հարցին էկոնոմիկայի նախարարը բացասական պատասխանեց, ասելով, որ արդյունաբերության բոլոր ճյուղերում աճ կա: Նրա ներկայացմամբ, ամենամեծ աճն ունեցել է մեքենաշինությունը, թեեւ բազան այստեղ ցածր է, ապա՝ թեթեւ արդյունաբերությունը, ակնագործությունը, հանքարդյունաբերությունը, սննդարդյունաբերությունը:

Մեկ այլ հարց էլ առնչվում էր փոքր ու միջին բիզնեսի համար արտոնություններից օգտվելու հնարավորություն ստեղծելուն: Ըստ Տիգրան Դավթյանի՝ 300 մլն դրամի սահմանափակումներ ներմուծողների համար ավելացված արժեքի հարկի հետաձգումը գումարային մեծ չափ չի համարվում, բայց փոքր ու միջին բիզնեսի համար էլ քննարկվում է ժամանակավոր ներմուծման ռեժիմի հետաձգման արտոնություն կիրառելու հարցը:

«**Ազգի**» հարցն առնչվում էր վերջերս տարածված տեսակետին, որ նոր հանքերի շահագործումը Սյունիքում կարող է խանգարել զբոսաշրջության զարգացման ծրագրին այս տարածաշրջանում, ինչի հետ են կապում նաեւ ազգային մրցունակության հիմնադրամի նախագահ Բեկոր Փափազյանի հրաժարականը: Այս մասին էկոնոմիկայի նախարարը նախ ասաց, որ Բեկոր Փափազյանի հրաժարականն այդ հարցին կապված չէ, ապա նշեց, որ երկու ոլորտների զարգացումն այս տարածաշրջանում «հանգիստ կարելի է համատեղել, եթե ողջամիտ ծրագրեր իրականացնենք»:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

ԱՆԴՐԱԴԱՐՁ Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՊՆԴՄԱՆԸ

# Աշխատուժի արտագաղթի պատճառներն ու հեղինակները

**Անցումային տնտեսություն ունեցող երկրներում արտագաղթը դասվում է կարեւորագույն հիմնահարցերի շարքին: Այս իմաստով բացառություն չէ նաեւ Հայաստանը, ուր աշխատուժի արտագաղթը սերտորեն կապված է բազմաթիվ սոցիալ-տնտեսական խնդիրների կարգավորման հետ: Միաժամանակ, մեր կողմից կատարված համեմատական վերլուծությունները վկայում են, որ առանձնապես բարվոք վիճակում չեն գտնվում ոչ հարեւան Վրաստանը, որտեղ վերջին տարիներին շոշափելի ձեռքբերումներ են նկատվում ինչպես ժողովրդավարության, այնպես էլ տնտեսական զարգացման /միայն ծառայությունների ոլորտում 2010թ. տնտեսական աճը կազմել է 62 տոկոս, իսկ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է մոտ 5,000 ԱՄՆ դոլար/ եւ խոշորածավալ ներդրումային ծրագրերի իրականացման առումով, այնպես էլ Ադրբեջանում, ուր շարունակվում են նավթադոլարների մուտքը պետական բյուջե եւ ռազմական ասպարեզ, ինչպես նաեւ բարելավվում են այնպիսի կարեւորագույն տնտեսական ցուցանիշներ, ինչպես, ասենք, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն հասել է 11,000 ԱՄՆ դոլարի, տնտեսական աճը՝ 3,7%, գործազրկությունն ընդամենը 0,9%: Այս երկրում, մասնավորապես, ՄԱԿ-ի փորձագետների գնահատմամբ միգրացիայի բացասական սալդոն կշարունակվի մինչեւ 2015 թ.: Իսկ Ադրբեջանից արտագաղթածները միայն Ռուսաստանում կազմում են ազգային փոքրամասնությունների 15 տոկոսը (այսօր Մոսկվայում ավելի շատ ադրբեջանցիներ կան, քան Բաքվում): http://catalog.fmb.ru/georgia8.shtml**

**Համեմատության համար նշենք, որ հայերն, օրինակ, Ռուսաստանում կազմում են ազգային փոքրամասնությունների ընդամենը 5 տոկոսը: Հասկանալի է նաեւ, որ այդ պայմաններում ոչ մեկը հարեւան երկրներում չի համարձակվում խոսել Վրաստանի կամ Ադրբեջանի վերջանալու, դրանց վախճանի մասին:**

**Կարեւոր է հաշվի առնել, որ աշխատուժի արտահոսքը Ռուսաստան եւ հեռավոր արտերկիր ներկայումս պայմանավորված է հիմնականում այդ երկրներում բնական աճի անկման եւ բացասական մնացորդի աճի հետ (մահացությունների թիվը գերազանցում է նորածինների թվին): Տեղի է ունենում ոչ միայն այդ երկրների ներգաղթի քաղաքականության պայմանների պարզեցում (ավելի գայթակղիչ պայմաններ աշխատող միգրանտների համար), այլ նաեւ այսպես կոչված կադրային որս թույլ զարգացած երկրներից:**

**Այս պայմաններում ՀՀ առաջին նախագահի կողմից օտար լրատվամիջոցներին հարցազրույց տալու համար տնտեսագիտական գրագիտությամբ երբեք աչքի չընկած որոշ նախկին պաշտոնյաներ տրամադրում են վիճակագրական տվյալների խիստ միակողմանի մեկնաբանություններ, չորս ամիսների միտումներից կատարում ընդհանրացումներ եւ ընկնում վիրտուալ մղձավանջների գիրկը: Հետեւաբար, իրատես լինելու համար հարկ ենք համարում շեշտել հետեւյալը.**

**1. Անընդունելի է ավանդաբար (անգամ խորհրդային տարիներին) տեղ գտած արտագնա աշխատանքների մեկնողների արտահոսքը ներկայացնել որպես երկիրը դատարկելու միտում: Հարկ է հիշել, որ տարվա վերջին եռամսյակում տեղի է ունենում նաեւ նրանց զգալի մասի վերադարձ, չխոսելով ամռան ամիսներին Հայաստան այցելող հազարավոր հայերի մասին, որոնց մի ստվար զանգվածը նույնպես վերադառնում է հայրենիք՝ ապրելու:**

**2. Անպարկեշտություն է բնակչության 45 հազարանոց արտահոսքը համարել Հայաստանի ավարտման գործընթաց: Առավել եւս չառաջարկելով իրավիճակի բարելավման որեւէ իրատեսական քայլ:**

**3. Վերլուծությունների եւ մեկնաբանությունների հեղինակներին պետք է հիշեցնել, որ ՄԱԿ-ի տվյալներով 1991թ.-ից մինչ օրս Հայաստանը լքել է մինչեւ 1մլն 300 հազար մարդ, ըստ որում, համեմատաբար բարվոք ՄԱԿ-ը համարում է 2003-2007թթ., իսկ առավել անբարենպաստ՝ 1991-1998թթ.: http://www.armenialiberty.org/content/article/2038591.html; http://www.akumb.am/showthread.php/24869**

**4. Արժե հիշել, որ հենց առաջին նախագահի իշխանության օրոք ձեւավորվեց Սփյուռքի նոր ալիքը, ի հաշիվ Հայաստանից զանգվածային արտագաղթի:**

**5. Արտագաղթը մնում է երկրի կարեւորագույն մարտահրավերներից մեկը: Սակայն մեզ համար կարեւոր է, թե ովքեր են այսօր խոսում դրա մասին եւ ինչ մասնագիտական ու քաղաքական պոտենցիա ունեն իրավիճակը բարելավելու համար: Ավելի կարեւոր է մեկնաբանողները մտածեն իրենց շարքերից արտագաղթողների եւ քաղաքական նոր կառույցների ձեւավորման հեռանկարների ու բոլոր ժամանակներում արձանագրված պատասխանատվության ու պարկեշտության դեֆիցիտի մասին:**

**Հավատացած ենք, որ արտագաղթը մի օր կկասեցվի մեր երկրում մարդկանց ստեղծագործ աշխատանքի համար արժանի պայմանների ձեւավորման շնորհիվ: Համոզված ենք նաեւ, որ արտագաղթի կասեցումն այսօր հատկապես օտարների մոտ շահարկողների շնորհիվ չի լինի:**

**ԼԵՎՈՆ ՎՐԹԱՆԵՍՅԱՆ**

# Օրգանական գյուղատնտեսության ուսուցման ծրագիր

«Հայաստանի մանուկներ» հիմնադրամը (COAF), որը 2004-ից Արմավիրի մարզում իրականացնում է «Գյուղական համայնքների համապարփակ զարգացման ծրագիր», վերջերս հանդես եկավ օրգանական գյուղատնտեսության ուսուցման նախագիծ իրականացնելու նախաձեռնությամբ: Նախաձեռնության նպատակը գյուղերի ավագ դպրոցական տարիքի երեխաների շրջանում գյուղատնտեսության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելն է՝ նորարարական մեթոդների եւ գործնական ուսուցման եղանակների միջոցով: Հունիսի 19-ին Արմավիրի մարզի Քարակերտ, Դալարիկ, Լեռնագոգ, Մյասնիկյան գյուղերի գյուղատնտեսական խմբակներին անդամակցող 5 աշակերտներ 8 շաբաթով մեկնեցին ԱՄՆ: Մեյն նահանգի «Արարատ ֆարմ» ֆերմայում երեխաները հնարավորություն կունենան մասնակցելու օրգանական գյուղատնտեսության դասընթացների, կշարունակեն խորացնել անգլերեն լեզվի գիտելիքները, ինչպես նաեւ կմասնակցեն մշակութային ծրագրերի:

Մինչեւ ԱՄՆ մեկնելը «Խաղաղության կորպուսի» կամավորների



աջակցությամբ անցկացվեցին անգլերենի դասընթացներ, երեխաները ուսուցողական այցեր կատարեցին Արմավիրի մարզում օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող դաշտեր եւ այգիներ:

Վերադարձից հետո երեխաները փոխանցելու են ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները իրենց ընկերներին: Ծրագիրը նպաստելու է նաեւ երեխաների մասնագիտական կողմնորոշմանը, ինչի անհրաժեշտությունը մեր դպրոցներում այսօր զգացվում է: «Ցանկանում եմ՝ մեր խմբով միանանք եւ Հայաստանում ստեղծենք զարգացած էկոլոգիական գյուղատնտեսության կենտրոն», ասում է խմբի անդամ, դալարիկցի դպրոցական Աննա Մկրտչյանը:

**Ս. Խ.**

# «Իրավունք» թերթի դեմ հայցը մերժվեց

**Երեւանի Կենտրոն ու Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը երեկ մերժեց ԱԺ պատգամավոր Տիգրան Արզաքանցյանի հայցն ընդդեմ «Իրավունք» թերթի: ԱԺ պատգամավորը թերթի դեմ հայց էր ներկայացրել «Կլորիկ գումա՞ր է «կրվել»» խորագրով հրապարակման համար: Պատգամավորն իր հայցով «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ից պահանջել էր 3 միլիոն դրամ՝ զրպարտության եւ իր անձը վիրավորելու համար: Դատարանը հայցն ամբողջությամբ մերժել է՝ անհիմն լինելու հիմքով:**

**Ի. Պ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# ՀՅԴ-ն ընդհանուր ժողով է գումարել

Երեկ գումարվեց ՀՅԴ 31-րդ ընդհանուր ժողովը՝ մասնակցությամբ կուսակցության աշխարհասփյուռ կառույցների, ինչպես նաեւ Հայաստանի Ազգային ժողովի ՀՅԴ խմբակցության ներկայացուցիչների: Ժողովը բացած ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ **Արմեն Ռուստամյանի** խոսքով՝ քննարկվելու են (ժողովի երեկվա բաց մասին հաջորդելու էին փակ եւ ոչ մեկ օրվա քննարկումները) անցած տարիների աշխատանքը, երկրում ստեղծված վիճակն ու անելիքները:

ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ **Հրանտ Մարգարյանն** իր խոսքում նշեց, թե անցած երեք տարին (ՀՅԴ նախորդ ընդհանուր ժողովը 2008-ին է տեղի ունեցել) հայ ժողովրդի, հայաստանցիների եւ ՀՅԴ-ի համար եղել են ծանր ու տագնապալի, մթնոլորտը հաճախ հագեցած է իրարամերժ, հակասական տեսակետներով, մեղադրանքներով, բամբասանքով, որոնք ազդում են ներկազմակերպական իրավիճակի վրա: Խոսելով նախագահական ընտրություններով սկիզբ առած առճակատման մթնոլորտի մասին (որն ըստ Մարգարյանի՝ արտաքին միջամտության դուռ է բացել), Մարգարյանը հիշեց «ազգային կյանքն ալեկոծած հայ-թուրքական հարաբերությունները, ֆինանսատնտեսական ճգնաժամը. «Վերջնականորեն ապացուցվեց՝ գործող իշխանությունները կոռուպցիային, տնտեսական անարդարություններին, արտոնյալ խավի սանձարձակություններին վերջ դնելու ոչ անհրաժեշտ կամքն ունեն եւ ոչ էլ ի վիճակի են այդ անել: Անհրաժեշտ է համակարգային իշխանափոխություն»: Ասաց, որ անցած տարիներին՝ թե՛ իշխանության մեջ, երբ մասնակից էին կոալիցիային, թե՛ ընդդիմության օրերին, ՀՅԴ-ն պահել է իր դեմքը, արժանապատվությունն ու անկախությունը. «Կոալիցիայից դուրս գալուց հետո, անկեղծ ասած, մեր անկախությունը պահպանելը, ազդեցությունների գերի չդառնալը ավելի դժվար մարտահրավեր է եղել մեզ համար: Այս դաշտում կատարյալ բռնապետություն էր, տիրական էր՝ ով մեզ հետ չէ, մեր դեմ է նշանախոսքը, դեռ ավելին՝ ով մեզ հետ չէ, կեղծ է, տականք է, եւ այլն եւ այլն: Բայց մենք պահեցինք մեր դեմքը, այս մի փորձությանն էլ դիմացանք»:

Առաջագա նպատակների մասին խոսելիս Մարգարյանը նշեց. «Մեր նպատակն է՝ ազատ ու արդար ընտրությունների միջոցով հասնել իշխանափոխության, ավելի ճիշտ՝ մեր առանցքի շուրջ որակապես նոր իշխանությունների ձեւավորման», ՀՅԴ ավելի վաղ կեցվածքը վերահաստատեց նա՝ հավելելով, որ արտաքին հնարավոր վտանգները դիմագրավելու նպատակով չեն զլանալու անխտիր, բոլոր քաղաքական ուժերի հետ գործակցելու եւ ընդհանուր կեցվածքներ դրսեւորելու հարցում. «Այո, մենք հեղափոխական կուսակցություն ենք: Երբ օրինական պայքարի կարելիությունները բացառվեն, երբ անօրինական պայքարի դուրս գան մեր դեմ, երբ ազգային շահը եւ անվտանգությունը պահանջեն, մենք դարձյալ հեղափոխականներ ենք: Բայց հեղափոխական լինելուց առաջ մենք ազգային կուսակցություն ենք եւ չենք կարող նկատի չունենալ երկրի ու ժողովրդի պայմաններն ու շահը: Երբ հեղափոխության իրական պատճառներ չկան, երբ ինքը կյանքը չի պարտադրում այն, հեղափոխական գործունեությունը միայն արկածախնդրություն է եւ ըստ ամենայնի մերժելի: Մենք դեմ ենք նաեւ երկիրը ցնցումների ենթարկելուն: Անվտանգությունն ու արտաքին մարտահրավերները պահանջում են քաղաքական կայունություն եւ ազգային առավելագույն համերաշխություն: Մյուս կողմից՝ ոչ ոք դեռ չի սպառել պայքարի սահմանադրական կարելիությունները»: Իսկ թե ինչու ընդդիմությունը միասնական չէ կամ միասնական ճակատ չի ձեւավորվում՝ Մարգարյանը հակադարձեց. «Միանանք, որ ի՞նչ լինի: Միանանք, Սերժ Սարգսյանին փոխարինենք Լեւոն Տեր-Պետրոսյանո՞վ: Որ վերադառնան ներազգային անհանդուրժողականության, ցինիզմի, ազգային հարցերում զիջելու պատրաստ մթնոլորտն ու տարինե՞րը: Որ ընդամենն անձն անձո՞վ փոխարինվի»:

Ղարաբաղյան կարգավորման գործընթացն անցնող երեք տարիներին, ըստ Հ. Մարգարյանի, նոր փուլ չի մտել՝ Ադրբեջանի ոչ կառուցողական կեցվածքի պատճառով: Միաժամանակ, ի դեմս ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահող երկրների, միջազգային հանրության մեջ առավել ամրապնդվել է այն տեսակետը, որ Արցախը չի կարող վերադարձվել ադրբեջանական ենթակայության. «Կարգավորման ուրվագծվող հնարավորությունը, սակայն, հայկական կողմից պահանջում է այնպիսի զիջումներ, որոնք մեր եւ մեր ժողովրդի մեծամասնության համար անընդունելի են: Անհրաժեշտ է ազգովին պատրաստ լինել դիմագրավելու այդ ոչ անհավանական պահը», ասաց ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչը՝ Ջավախքի մասով էլ նկատելով, թե Ջավախքը վառոդով լեցուն տակառ է, ուշ թե շուտ պայթելու է, եթե ժամանակին չցուցաբերվի խոհեմություն եւ Ջավախքին չտրվի այն, ինչ սահմանում են միջազգային օրենքն ու փորձը:

Հ. Մարգարյանն ասում էր, թե առկա է Սփյուռքի նորովի կազմակերպման խնդիր: Արտաքին շատ ուժեր ճգնում են պառակտել հայությունը: Հայաստանը՝ Սփյուռքի, Սփյուռքը Հայաստանի դեմ լարելու ջանք կա: Միշտ չէ, որ այս առումով հայկական այլազան շրջանակների հակազդեցությունը առողջ է: Պատահում է հաճախ, որ հայկական ուժերը, գիտակցաբար կամ անգիտակցաբար, որդեգրում են պառակտումի ճամփա բացող գործելակերպ: Օրինակ՝ մեր օրերում բազմապատկվել է արեւմտահայության շահերի պաշտպան կառույցների թիվը. «Մենք մեկ ազգ ենք, ունենք մեկ պայքար եւ պետք է գործենք մի ճակատով»:

ՀՅԴ ընդհանուր ժողովի ընդունած որոշումների մասին կիմանանք ժողովի ավարտից հետո, ամփոփիչ ասուլիսում, որի մասին լրագրողներին լրացուցիչ կիայտնվի:

Ի դեպ, ընդհանուր ժողովից առաջ, պատասխանելով լրագրողների հարցերին, ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանն ասել է, թե ՀՅԴ-ն առաջագա խորհրդարանական ընտրություններին մասնակցելու է առանձին, եթե ֆորսմաժորային իրավիճակներ չլինեն Ղարաբաղի հարցում, վերջին դեպքում այդ հարցի համեմատ ամեն ինչ կդառնա երկրորդական, եւ պետք կլինի, որ բոլոր ուժերը համախմբվեն:

**Ս. Խ.**

# Հայ թմրամոլները շատանում են, տարիքը՝ երիտասարդանում

*1-ին էջից*

Մինչդեռ Եվրոպայում նախկին թմրամոլների համար ստեղծում են հասարակական կազմակերպություններ, համայնքներ: Պետական օժանդակությամբ գործող կառույցները օգնում են, որ նախկին թմրամոլները կարողանան վերադառնալ հասարակություն»:

Մասնագետը նշում է, որ տարեցտարի Հայաստանում թմրամոլների աճ է նկատվում: Դա մտորելու լուրջ տեղիք է տալիս: Եթե 2009-ին Հայաստանում հաշվառված էր 1717 թմրամոլ, ապա 2010-ին նրանց թիվը կրկնակի աճել է՝ հասնելով 2751-ի: Թեպետ հայ թմրամոլների տարիքային ամենամեծ խումբը 30-35 տարեկանն է, սակայն թմրամոլների տարիքի երիտասարդացման միտում կա: Եթե 2002-ին կատարված հետազոտություններում անչափահասների վերաբերյալ որեւէ ցուցանիշ չկար, ապա վերջին տարիներին շատացել են ոչ միայն թմրամիջոց օգտագործող անչափահասները, այլեւ կանայք: Ի տարբերություն եվրոպական բազմաթիվ երկրների՝ Հայաստանում դեպքեր չեն արձանագրվել, երբ գիշերային ակումբներում թմրամիջոց են բաժանում:

Գրիգոր Մալենցյանը նշում է, որ թմրամիջոցների դեմ պայքարում օրենսդրական բացը լրացված է: Հենց այդ օրենսդրական բարեփոխումներն են պատճառը, որ այսօր շատերն են դիմում նարկոլոգիական կլինիկաներ: «Տարիներ առաջ շատ քիչ մարդ էր դիմում բժիշկների ու հոգեբանների օգնությանը՝ թմրամոլությունից բուժվելու համար: 2008-ին, երբ թմրամիջոցների օգտագործումը ապաքրեականացվեց, նարկոլոգիական կենտրոններին դիմողների թիվը կտրուկ աճեց: Եթե 2002-ին նարկոլոգիական կենտրոնների օգնությանը դիմել է 22 մարդ, ապա 2009-ին բուժում ստացել է 257 անձ, 2010-ին՝ 359»:

Հայաստանում գործում է նարկոլոգիական 4 կլինիկա՝ Սեւանում, Վանաձորում, Գյումրիում եւ Երեւանում: Այս կլինիկաներում կարող են բուժվել ոչ միայն թմրանյութերի կախվածությունից, այլեւ ալկոհոլից: Բուժումն անվճար է:

Մալենցյանի գնահատմամբ՝ բուժումը կարող է առավել արդյունավետ լինել, եթե հասարակության վերաբերմունքը փոխվի: Վիճակագրական տվյալներով բուժումից հետո հիվանդների 5-10 տոկոսը վերադառնում է նորմալ կյանքի:

Թմրամիջոցներ Հայաստան կարող են ներկրել միայն հատուկ լիցենզիաների միջոցով: Տարեցտարի զգացվում է առգրավված թմրանյութի աճ:

«Դա ունի իր օբյեկտիվ պատճառները: Աֆղանստանում միայն 2008-ին 8400 տոննա հերոին է մշակվել: Դա տարածելու խնդիր կա: Աֆղանստանից թմրամիջոցները հիմնականում տարածվում են Իրանի միջոցով: Համաձայն կատարված վերջին հետազոտությունների՝ Իրանում թմրամոլների թիվը գերազանցում է 2.5 միլիոնը: Սա հսկայական թիվ է: Իհարկե, մեր ոստիկանությունը պետք է զգոն լինի, զգաստ պետք է լինեն նաեւ մաքսակետում, սակայն, երբ ունենք նման հարեւան, ապա որքան էլ պայքարեն, որեւէ կերպ Հայաստան թմրանյութ կթափանցի. թեկուզ 50 գրամ, սակայն կթափանցի»:

Հիշեցնենք, որ անցյալ տարի ՀՀ ոստիկանապետ Ալիկ Սարգսյանի ԻԻՀ կատարած այցի ժամանակ Հայաստանի եւ Իրանի ոստիկանների համապատասխան վարչությունների միջեւ համագործակցության հուշագիր է ստորագրվել թմրամիջոցների դեմ պայքարելու ուղղությամբ:



# Արեւային էներգիան փոխակերպող սարքերը միանգամայն անվտանգ են

**Արեւային էներգիայի մասնագետ, նորարար Ռուբեն Վարդանյանը կարծում է, որ Հայաստանում կա բավարար գիտական ներուժ՝ արեւային էներգիային կապված գործունեությամբ զբաղվելու համար: Նրա խոսքով՝ արեւային էներգիան օգտագործելու ուղղությունը մեր երկրում զարգացել է դեռեւս 1950-60-ական թվականներից, ու կան տարբեր գիտական խմբեր ու ձեռնարկություններ, որոնք ստեղծվել են հենց արեւային էներգիային կապված գործունեություն ծավալելու համար: Սակայն գիտական այդ խմբերն ու հիմնարկները վերջին տարիներին ակտիվ չեն: Նորարար Վարդանյանն ասում է, որ կոնկրետ իր խումբը, ի տարբերություն այլ խմբերի եւ հիմնարկների, ակտիվորեն մասնակցում է միջազգային գիտաժողովներին, ու արդեն նկատելի հաջողություններ ունեն: Նրանք կարողացել են մշակել արեւային էներգիան փոխակերպող 2 սարք: կելի շենքերի համար, այլ ավելի հարմար են առանձնատների համար: Ինչ վերաբերում է սարքերի անվտանգությանն ու էկոլոգիապես անվտանգ լինելուն, բանախոսները երկուսն էլ փաստեցին, որ դրանք միանշանակ անվտանգ են: Առհասարակ, էներգիա ստանալու այլընտրանքային տարբերակներից ամենաանվտանգը հենց արեւային էներգիան փոխակերպող սարքերն են: Ըստ Ռուբեն Վարդանյանի՝ դրանցում որեւէ վնասակար նյութ չի կիրառվում. «Տեղադրելուց հետո էլ 20-30 տարի կարող են աշխատել»: Այս սարքերը նույնիսկ կարող են աշխատել ամպամած օրերին, դրանց մարտկոցներում արեւային էներգիան կուտակվում է, եւ ամպամած օրերին օգտագործվում է հենց այդ էներգիան: Արտասահմանում նույնիսկ մշակվել են սարքեր, որոնք կարող են օգտագործել բարձրահարկ ու բազմաբնակարան շենքերում: Եթե այդ սարքերը տեղադրվեն**




**Դրանցից մեկն արեւային էներգիան փոխակերպում է էլեկտրականի, իսկ մյուսը արեւի էներգիայից ստանում է նաեւ ջերմային էներգիա:**

**Ռուբեն Վարդանյանը լրագրողներին այս մասին երեկ տեղեկացրեց «Տեսակետ» ակումբում, որտեղ, նրանից բացի, երեկ հյուրընկալվել էր նաեւ «Ինդաստրիալ թեքնոլոջիս» ընկերության տնօրեն Արթին Մելիքյանը: Վերջինս համագործակցում է Ռուբեն Վարդանյանի հետ: Ընկերության տնօրենի կարծիքով՝ մեզանում գործարարները գիտական նվաճումներին թերահավատորեն են վերաբերվում, սակայն, ըստ նրա, այդ նվաճումներին հարկավոր է հավատալ ու վստահել: «Մեր պլանների մեջ է մտնում նաեւ այս խմբին դրամաշնորհ տրամադրելը, չէ՞ որ դրամաշնորհի գումարն արդյունքում հետ է վերադարձվելու», ասում է Արթին Մելիքյանն ու տեղեկացնում, որ արեւային էներգիան փոխակերպող մի քանի սարքեր արդեն տեղադրվել են, սակայն դրանք նախատեսված չեն բնահարթ տանիքների վրա, ապա հնարավոր կլինի ստանալ նաեւ ջերմային էներգիա եւ բնակիչներին ապահովել տաք ջրով: «Ազգի» հարցին, իսկ Հայաստանում բազմաբնակարան շենքերի համար որեւէ սարք մշակվե՞լ է, նորարար Վարդանյանը պատասխանեց. «Մշակված նախագիծ ունենք, սակայն նման սարք այստեղ դեռ չի ստեղծվել»:**

**Վերջում նորարար Վարդանյանն անդրադարձավ գիտնականների ամենացավոտ կողմին՝ ֆինանսավորմանը: Արեւային էներգիայի փոխակերպման ուղղությունը զարգացնելու համար, ըստ նորարարի, հարկավոր են պետական ուշադրություն ու հոգածություն: Պարոն Վարդանյանն ասում է՝ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով գիտնականները դժվարությամբ են աշխատում: Եվ միայն դրամաշնորհների դեպքում է, որ կարողանում են ավելի արդյունավետ աշխատել:**

**Ի. Պ.**

# Փլուզված ճանապարհների նորոգման աշխատանքները կսկսվեն շուտով

**Ինչպես տեղեկացանք տրանսպորտի եւ կապի նախարարության մամուլի ծառայությունից, Երեւան-Երասխ-Գորիս-Իրանի սահման միջպետական ավտոճանապարհի 97+250 կմ տեղամասում (Ելփին-Չիվա հատված) գարնանային առատ տեղումների հետեւանքով առաջացած փլվածքի վերանորոգման նախագծման աշխատանքներն արդեն ավարտվել են: Նախագծման աշխատանքներին զուգահեռ, երկու ողղությամբ ապահովվել է մայրուղու անցանելիությունը: Առաջիկա օրերին կսկսվեն փլվածքի վերանորոգման շինարարական աշխատանքները:**

**Մեկ այլ՝ Շատին-Եղեգիս ճանապարհի 1-ին կմ-ի սողանքային հատվածի վերանորոգման նախագիծը նույնպես պատրաստ է: Ճանապարհին հարակից հողերի օտարման խնդիրները լուծվելուց հետո կսկսվեն շինարարական աշխատանքները:**

**Երեւան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի Իսլամական Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 365 կմ-ում փլվածքի հետեւանքների վերացման նպատակով ճանապարհի վերանորոգման նախագծման աշխատանքները կավարտվեն հունիսի 27-ին:**

**Նախարարության հաղորդագրության համաձայն, երկու տասնյակից ավելի վթարային ճանապարհների եւ տրանսպորտային օբյեկտների վերանորոգման աշխատանքները կսկսվեն հուլիսի 1-ից:**

**Վթարված ճանապարհներին անվտանգության պահպանման նպատակով հատուկ նշանները վթարների առաջին իսկ օրվանից տեղադրված են ճանապարհներին:**

**Ա. Ս.**

## Ուխտագնացություն

# Անի. Ավերակների թագուհին՝ ուժասպառ, խոնարհված, բայց հպարտ



*Սուրբ Ամենափրկիչ եկեղեցի*

Կարսից դեպի Անի հասնելու համար անհրաժեշտ է անցնել 45 կիլոմետր ճանապարհ: Չափազանց դժվար ու ծանր է այդ կիլոմետրերը հաղթահարելը:

Վախ, անհանգստություն, հպարտություն ու հետաքրքրություն. այս զգացողություններն են համակում հայ ուխտավորին Անիի ճանապարհին:

Ճանապարհն անցնում է ամայի դաշտի միջով: Շուրջը լռություն է:

Մինչ Անի քաղաք մտնելը բերդապարսպի վրա զբոսաշրջիկին է դիմավորում Բագրատունյաց տոհմի զինանշանը՝ սլացող առյուծը: Խորհրդանիշը զգաստացնում է. բերդի պարիսպներից ներս մտնողը պետք է իմանա, թե ովքեր են քաղաքի տիրակալները: Քաղաքի բերդապարիսպը կառուցել է Սմբատ Երկրորդ Տիեզերակալը: Շինարարությունը տեւել է 8 տարի:

Առաջին անգամ Անի այցելողին թվում է, թե բերդի պարիսպները կբացվեն, ու կտեսնես այն հրաշքը, որ դարեր շարունակ զարմացրել է արեւելքի եւ արեւմուտքի ժողովուրդներին:



*Գագկաշեն*

Երբեմնի հզոր եւ գեղեցիկ Անին այսօր վերածվել է ավերակների: Ամենազոր ժամանակը եւ մարդու ավերիչ ձեռքն անխնա ոչնչացրել են անզուգական հնություններն ու հուշարձանները: Անին այսօր նման է որբացած ու տառապած մոր, որ հպարտությամբ փորձում է դիմանալ բոլոր չարիքներին ու շարունակել գոյատեւել, թեպետ անխնա հարվածներից առաջացած վերքերը դեռեւս չեն սպիացել:

Միջնադարյան Հայաստանի մշակութային խոշոր կենտրոն Անիում հավասարապես զարգացած էին արհեստները, մատենագրությունը, գիտությունը, ճարտարապետությունն ու արվեստի մյուս ճյուղերը:

Անին ունեցել է 40 քաղաքային դարպաս, եղել առեւտրային, մշակութային կենտրոն:

Անին համարվում էր հազար ու մեկ եկեղեցիների մայրաքաղաք: Սա մի թիվ էր, որ նշվում է արեւելքում առավել մեծ հռչակ ձեռք բերելու համար: Թեպետ Անին եկեղեցիների մայրաքաղաք էր, սակայն արդեն մի քանի դար այստեղ պատարագ չի մատուցվել, եկեղեցիներում խունկ չի ծխվել եւ աղոթք չի կարդացվել:

Չնայած դարավոր ավերումներին, վեհաշուք մայրաքաղաքը պահպանել է ճարտարապետական կոթողների ավերակներն ու մնացորդները: Կիսավեր կառույցները, փլատակները, կառույցների առանձին հատվածներն ու քանդակներն են հուշում ավերակների թագուհու երբեմնի գեղեցկության ու փառքի մասին:

Բերդապարսպից ներս, գերեզմանային լռության մեջ, զբոսաշրջիկին դիմավորում են հազարամյա մշակույթ ունեցող եկեղեցիներն ու հուշարձանները:

Առաջին տաճարը, որ գրավում է այցելուի ուշադրությունը, Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին է: Այսօր պահպանվել է եկեղեցու ընդամենը մեկ երրորդ հատվածը, սակայն այդ հատվածն էլ թույլ է տալիս պատկերացում կազմել, թե քարի հայ վարպետները ճարտարապետական ինչպիսի միտք են ունեցել, ու դարեր առաջ ինչպիսի հրաշք է այստեղ վեր խոյացել: Միայն ապշել կարելի է, թե ինչպես է այդ տեսքով եւ կառույցով եկեղեցին պահպանվել մի քանի հարյուրամյակ:

Եկեղեցու ներսը զարդարված է որմնանկարներով: Սուրբ Ամենափրկչի տեսքն այսօր այնպիսին է, որ բաց երկինքն է լուսավորում աստվածաշնչյան պատկերները, եւ հատկապես մայրամուտին, երբ արեւի ճառագայթները լուսավորում են եկեղեցին, տպավորություն է ստեղծվում, թե պատկերները երկինք են բարձրանում:

Անիի եկեղեցիների թագուհին Մայր տաճարն է՝ Սուրբ Կաթողիկեն: Ճարտարապետներն ու պատմաբաններն այն համարում են Կովկասի ճարտարապետության զարդը: Եկեղեցին նվիրված է Աստվածածնին: Շինարարությունը սկսվել է Սմբատ 2-րդի օրոք՝ 989 թվականին, եւ ավարտվել Գագիկ 1-ինի օրոք, նրա կնոջ՝ Կատրանիդե թագուհու հովանավորությամբ:

Տաճարի կառուցումը տեւել է 20 տարի: Ճարտարապետը հռչակավոր Տրդատն էր: Սուրբ Կաթողիկեի յուրահատկությունն ու հմայքը պարզության մեջ են: Տրդատը ցանկանում էր, որ տաճարը լիներ պարզ, սակայն ոչ հասարակ, եւ առանձնանար կամարակալների, նրբասլաց սյուների, խոյակների ու քանդակների ներդաշնակությամբ:

Այսօր Անիի Մայր տաճարը կանգուն եւ կիսամեռ է միաժամանակ: Հեռվից կանգուն եւ խրոխտ տեսք ունի, սակայն մոտենալով նկատում ես. տաճարի գմբեթը գրեթե փլված է, պատերը խարխուլ են:

Առասպելը պատմում է, որ Կատրանիդե թագուհուն երազում հայտնված հրեշտակն է հուշել հովանավորել տաճարի կառուցումը: Հրեշտակը թագուհուն խոստացել է, որ կառույցի շինարարության ընթացքում չի լքի եւ այնքան ժամանակ կպահպանի եկեղեցին, մինչ արաբները տեսնեն Քրիստոսի գալուստը:

Սա իհարկե առասպել է, սակայն ո՞վ իմանա, գուցե հենց Կատրանիդե թագուհու հրեշտակն է պահպանում եկեղեցին չարիքից, երկրաշարժերից ու թուրքերի ատելությունից:

Մայր տաճարից դեպի հարավ՝ ձորի բերանին, վեր է խոյանում մի եկեղեցի, որ զարդարված է որմնանկարներով:

1215-ին մեծահարուստ Տիգրան Հոնենցի նվիրատվությամբ կառուցված Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին բարակ սյուներ եւ նուրբ կամարներ ունի: Դրսից տաճարը նման է առնական տղամարդու: Այն ուժեղ է, գեղեցիկ, խրոխտ եւ ներդաշնակ բնությանը: Ներսից՝ փխրուն եւ քմահաճ կին, որ խոցված է բազմաթիվ վերքերով:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչը զարդարված է որմնանկարներով, աստվածաշնչյան պատկերներով ու խաչերով:

Մահմեդական ատելությունն ու թշնամանքը հասել են այն աստիճանի, որ թուրքերը փորել են տաճարում պատկերված սրբի աչքերը: Պատերին թուրքերեն գրություններ են, սիրո խոստովանություններ, խզբզոցներ:

Տաճարի խորանը չի պահպանվել, եկեղեցու գլխին խաչ չկա: Դրսից տաճարը զարդարում են հայկական արձանագրությունները: Դրանց մի մասը ջարդված է, մյուս հատվածը պահպանվել է հրաշքով:

Քաղաքի մեկ այլ հատվածում շրջանաձեւ կառույց կա: Տաճարն այդ կոչվում է Գագկաշեն: Ճարտարապետական կառուցվածքով նման է Զվարթնոց տաճարին, սակայն ավելի մեծ է:

Ճարտարապետը՝ Տրդատը, շինարարության ընթացքում բազմաթիվ փոփոխություններ է մտցրել, որպեսզի Գագկաշենն առանձնանա Զվարթնոցից: Եկեղեցին եռահարկ է եղել, արտաքին կողմից շրջապատված 36 կամարով, ունեցել է նույնքան թվով պատուհան եւ 3 դուռ, որոնց շրջանակները ծածկված են եղել քանդակներով:

Գագկաշենն ընդամենը 10 տարվա կյանք է ունեցել եւ հիմնովին ավերվել երկրաշարժից: Այսօր պահպանված խոյակները, կամարները, սյուներն ու զարդանախշերը թեթեւ արտացոլանքն են այն հրաշքի, որ ստեղծվել է դարեր առաջ:

Անիի արտաքին պարսպից դուրս է գտնվում Հովվի եկեղեցին: Գոթական ոճով կառուցված եռահարկ եկեղեցին ճարտարապետական գոհարներից մեկն է: Քաղաքում պահպանված բերդապարիսպները հուշում են Անիի հզորության եւ անառիկության մասին:



*Հովվի եկեղեցի*

Անին հզոր է ոչ միայն իր հնություններով եւ պատմական հուշարձաններով, այլեւ բնության ներդաշնակությամբ: Այստեղ յուրաքանչյուր պարիսպ, կառույց եւ եկեղեցի համահունչ է բնությանը, Ախուրյանին ու հանդիպակաց լանջերին եւ ստեղծում է բնության ու ճարտարապետության համաձուլվածք:

Այսօր Անին բաց տուրիստական գոտի է, տարիներ առաջ փակ ռազմական տարածք էր: Ավերակների կույտի վերածված Անին դարեր շարունակ դարձել է խաշնարած ցեղերի քոչավայրը: Նրանք իրենց գոմերը, փարախներն ու խրճիթները կառուցելու համար անխնա թալանել են վաղեմի մայրաքաղաքի սքանչելի, սրբատաշ ու քանդակազարդ քարերը, ավերել տաճարները՝ փնտրելով ոսկի եւ թանկագին իրեր:

Մեր այցելության ժամանակ էլ Անիի ավերակներում մի քանի տասնյակ կովեր էին արածում՝ երբեմնի փառահեղ թագուհու անկողինը դարձնելով արոտավայր: Քուրդ կինը չէր հասկանում, թե ինչու են հայ զբոսաշրջիկները Մայր տաճարում երգում, աղոթում ու արտասվում: Նրա համար տաճարն ընդամենը քարի կտոր էր, իսկ տարածքը՝ հրաշալի արոտավայր իր կովերի համար:



*Անիի Մայր տաճար*

Ոչ ոք չի կարող պատասխանել, թե որ մեղքի համար է Անին այսպես պատժվում: Ի՞նչ է նա արել, որ նման դաժան կերպով է հատուցում:

Վերջին վիրավորանքն ու ծանր հարվածը, որ ստացավ Անին, անցյալ տարի էր, երբ թուրք ազգայնականները Մայր տաճարում նամազի արարողություն կատարեցին: Քրիստոնյա եւ բարեպաշտ աշխարհը լռեց ու չդատապարտեց մահմեդականների այդ արարքը, դրանով իսկ հիմք ստեղծելով, որ նման արարքները կրկնվեն:

Թեպետ Անին ուժասպառ է, սակայն հպարտորեն դիմանում է: Միգուցե երկնային ուժերն են պահպանում, որ թագուհին շարունակի գոյատեւել, սակայն հույսը դնել միայն երկնային ուժերի վրա՝ միամտություն է:

Այս տարի լրանում է Անիի մայրաքաղաք հռչակման 1050-ամյակը: Արդյոք ժամանակը չէ՞, որ Հայաստանի Հանրապետությունը իրավական գործընթաց սկսի, որպեսզի համաշխարհային քաղաքակրթական ժառանգության կարեւոր հուշարձան Անին ՅՈՒՆԵՍԿՕ-ի օժանդակության ցանկում ընդգրկվի՝ այդ կերպ պաշտպանվելով թուրքական բարբարոսություններից:

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Անի-Երեւան**

**Արեւմտյան Հայաստան այցելությանն աջակցելու համար շնորհակալություն ենք հայտնում «Անի տուր» տուրիստական գործակալությանը:**



*Անիի բերդապարիսպ*

# Թուրքիան կանգնած է երկընտրանքի առջեւ

*Կամ Արեւմուտքին հակադրվելու գնով կպաշտպանի նախագահ Ասադին, կամ էլ ընդդիմության կողմը կանցնի եւ կտրի հարաբերությունները Սիրիայի հետ*

Երեկ **«Ազգը»**, անդրադառնալով Սիրիա-Թուրքիա սահմանագծում զորքերի փոխադարձ կուտակումով առաջացած լարվածությանը, նշել էր, որ սիրիական զորքերը Հաթայի (Ալեքսանդրետի սանջակ) Յայլադաղ գավառին սահմանամերձ Գյուվենչի գյուղում իջեցրել են տներից մեկի վրա ծածանվող թուրքական դրոշն ու այնուհետեւ ձեռնամուխ են եղել Խարաբջո գյուղի խուզարկմանը:

Գրելու պահին ձեռքի տակ ունեցել ենք նախնական տվյալներ: Նույն օրը առավոտյան միջադեպը մանրամասնեցին թուրքական լրատվամիջոցները: Պարզվեց, որ Գյուվենչի գյուղում Թուրքիայի դրոշը բարձրացվել է ոչ թե առանձնատներից մեկի վրա, այլ գյուղամերձ 3-հարկանի շենքի տանիքին, որը պատկանում է անտառտնտեսությանը եւ որպես դիտարկման կետ է օգտագործվում, ընդ որում՝ Սիրիայի թուրքական սահմանից ընդամենը 500 մետր հեռավորության վրա է:

Թեեւ թուրքական հանրային հեռուստատեսությունը նշեց, որ թուրքական դրոշը շենքի տանիքին գյուղացիներն են բարձրացրել, սակայն անտառտնտեսությունը պետական հիմնարկ է, իսկ տվյալ գյուղը՝ սիրիական: Դրոշ բարձրացնելու համար նախ գյուղացիները պետք է մտնեն պետական հիմնարկ: Ինչպե՞ս եւ ինչո՞ւ: Վերջապես, ի՞նչը պետք է դրդի, որ նրանք սեփական երկրում թուրքական դրոշ բարձրացնեն:

Հարցերի ստույգ պատասխանները չգիտենք: Սակայն առանց այդ էլ պարզ է, որ Սիրիայի տարածքում, այն էլ պետական հիմնարկի վրա Թուրքիայի դրոշի բարձրացումը սադրանք է: Քանի որ սիրիացի զինվորները, իջեցնելով թուրքական դրոշը, դա փոխարինել են սիրիականով, ուստի սահմանից ընդամենը 500 մետր հեռավորության վրա գտնվող շենքի տանիքին դրոշի բարձրացումը իբրեւ սադրանք պետք է կրի թուրքական կնիք:

Թերեւս կարելի էր չանդրադառնալ այս մանրամասներին, եթե Թուրքիայի դրոշն իջեցնելուց հետո սիրիական զորքերը չդիրքավորվեին սահմանամերձ բլուրների վրա, նրանց նոր կուտակումներով չհամալրեին, ի պատասխան դրան թուրք սահմանապահները անվտանգության արտակարգ միջոցառումներ չիրականացնեին, կուտակումների առնչությամբ արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն սիրիացի գործընկերոջ հետ ունեցած հեռախոսազրույցից հետո Թուրքիայում Սիրիայի դեսպան Նիդալ Կաբալին հանդիպման չհրավիրեր, եւ վերջապես ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը «մտահոգիչ» չհամարեր սիրիական զորքերի կուտակումը, զգուշացնելով Դամասկոսին, թե դա հղի է Թուրքիայի հետ հնարավոր բախումներով եւ BBC-ի գլխավորությամբ աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցները ձայնակցելով պետքարտուղարին, սիրիական կողմին չքննադատեին «ագրեսիվ» կեցվածքի համար:

Թեեւ օրերս Սիրիայի արտգործնախարար Վալիդ Մուալիմը զգուշացրել էր Թուրքիային՝ վերանայելու Դամասկոսի հանդեպ դիրքորոշումը, սակայն, անկախ զգուշացումից եւ սահմանագծում զորքերի կուտակումից, դեռեւս չկան հիմքեր թուրք-սիրիական բախումների հավանականության մասին չարաբաստիկ կանխագուշակումների համար: Ըստ երեւույթին «հավանական բախումները» ԱՄՆ-ի գլխավորությամբ Արեւմուտքի ցանկությունն են, իսկ Թուրքիայի հարցում Սիրիային վերագրվող «ագրեսիվ» կեցվածքը՝ աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցների երեւակայության արդյունք:

Սակայն, ինչ էլ որ լինի, թուրք-սիրիական հարաբերություններն արդեն սրվում են: Դա ինքնաբերաբար հանգեցրել է տարածաշրջանում Սիրիայի ռազմավարական դաշնակից Իրանի հետ հարաբերությունների վատթարացմանը: Այսպիսով, հարեւան երկրների հետ առկա խնդիրները «զրոյական» մակարդակի իջեցնելու Անկարայի դիրքորոշումը կանգնել է սպառման շեմին: Դրան զուգընթաց ի չիք են դարձել Մերձավոր եւ Միջին Արեւելքում առանցքային դեր խաղալու Թուրքիայի հաշվարկները, որովհետեւ արաբական երկրներում ծայր առած համաժողովրդական խռովությունների ընթացքում, բացի Սիրիայից, Թուրքիան անհարկի միջամտություններով հարաբերությունները սրել է նաեւ Եգիպտոսի եւ Լիբիայի հետ: Հատկանշական է, որ այս երկրները թուրքական միջամտությունը պայմանավորում են ԱՄՆ-ի եւ Եվրոմիության պատվերը կատարելու հարցում Անկարայի դրսեւորած ջանասիրությամբ:

Համենայն դեպս Սիրիայի հարցում Թուրքիան կանգնել է երկընտրանքի առջեւ. կամ Արեւմուտքին հակադրվելու գնով պետք է պաշտպանի նախագահ Բաշար Ասադի վարչակարգին եւ կասեցնի Սիրիայի հետ հարաբերությունների հետագա սրումը, կամ էլ ընդառաջելով ԱՄՆ-ին եւ Եվրոմիությանը, անցնի սիրիական ընդդիմության կողմը:

Այդ դեպքում արդեն նա ակնհայտորեն հակադրված կլինի նախագահ Ասադին, դրանով խզման շեմին կկանգնեցնի թուրք-սիրիական հարաբերությունները: Վերջին շրջանում Դամասկոսից Թուրքիային հասցեագրվող մեղադրանքները եւ այդ մեղադրանքներին թուրքական կողմի կոշտ պատասխանն ու նախագահ Ասադին ուղղված ամերիկյանի հետ համահունչ հորդորները ցույց են տալիս, որ թուրքերը Սիրիայում նախապատվությունը հետզհետե տալիս են ընդդիմությանը աջակցելու տարբերակին: Մնում է, որ շուտով նրանց հակազդի նաեւ Իրանը:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

ԹԵԺ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## «Հզբոլլահը» եւ Իսրայելը պատրաստվում են պատերազմի



Լիբանանում գործող շիա արմատականների «Հզբոլլահ» խմբավորումը պատրաստվում է Իսրայելի դեմ հնարավոր պատերազմի: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը, վկայակոչելով լավատեղյակ աղբյուր:

Գործակալության զրուցակցի խոսքերով՝ Սիրիայի ներկայիս շիա ղեկավարության անվերապահ աջակցությունը վայելող «Հզբոլլահը» վախենում է, որ ժողովրդական ապստամբության հետեւանքով Դամասկոսի վարչակարգը կարող է տապալվել: Սիրիայի վրա Արեւմուտքի ճնշումը թուլացնելու նպատակով շիա արմատականները կարող են նոր պատերազմ սկսել Իսրայելի դեմ:

«Սա «Հզբոլլահի» համար գոյատեւման հարց է: Հիմա նա պարտավոր է բարի գործով պատասխանել սիրիացիների բազմամյա աջակցությանը եւ օգնության հասնել Դամասկոսին», ասել է լիբանանցի քաղաքական գործիչներից մեկը, որ ծանոթ է տեղի շիա արմատականների ծրագրերին:

Նա ավելացրել է, որ «Հզբոլլահի» առաջնորդ շեյխ Հասան Նասրալլահի կարծիքով, Եգիպտոսում եւ Թունիսում կողմնակիցներին կորցրած ԱՄՆ-ը հիմա ուզում է «տեղը հանել» Սիրիայում եւ տապալել իր եւ Իսրայելի դեմ տրամադրված Բաշար Ասադին:

«Տարածաշրջանում պատերազմի մեջ են բարու ուժերը եւ Վաշինգտոնի կողմնակիցները: Սիրիան առաջինների խմբում է», Ռոյթերի աղբյուրն այսպես է պարզաբանել «Հզբոլլահի» ղեկավարության մտքերի ընթացքը: Նրա խոսքերով՝ Սիրիայի ներկայիս ղեկավարների՝ իշխանությունը պահպանելու համար Նասրալլահը պատրաստ է ամեն ինչի՝ «ներառյալ ռազմաճակատների բացումը Գոլանի բարձունքներում եւ Լիբանանի հարավում»:

Հինգ տարի առաջ Իսրայելը եւ «Հզբոլլահը» մղեցին 34-օրյա պատերազմ, որի ընթացքում երկու կողմերից սպանվեցին հարյուրավոր մարդիկ: Այն ժամանակ Իսրայելը ռազմական գործողություններ սկսեց իր երկու զինծառայողների առեւանգումից հետո:

Իսրայելցի փորձագետների կարծիքով, անցած տարիներին շիա արմատական խմբավորումը ոչ միայն վերականգնել է կենդանի ուժի եւ տեխնիկայի կորուստները, այլեւ էլ ավելի է ուժեղացել:

Իսրայելում եւս պատրաստվում են հնարավոր պատերազմին: Հունիսի 22-ին ամբողջ երկրում անցկացվել են վերջին տարիների ընթացքում քաղաքացիական պաշտպանության գծով ամենամեծ զորավարժությունները:

Պ.Ք.

# Թուրքիան ու Հայաստանը բանակցել են 3 թե 5 շրջան վերադարձնելու շո՞ւրջը

*1-ին էջից*

**- Համաձայն չեմ Հայաստանում հնչող այս մեկնաբանության հետ, թե ես եմ սրա մեծ աջակցողը: Ես՝ որպես վեհաժողովի նախագահ, արել եմ իմ աշխատանքը, պարտավոր եմ այն անել: Ես սպասել եմ մեկ տարի՝ հանդիպելու երկու պատվիրակությունների նախագահներին, քննարկելու եւ համաձայնելու ենթահանձնաժողովի մանդատը, բայց սա վեհաժողովի կոչն է, ինչը հայկական կողմը չի ցանկանում հասկանալ: Ենթահանձնաժողովը վեհաժողովի բանաձեւի արդյունք է, եւ ես պարտավոր էի այդ հարցը բարձրացնել բյուրոյում, որը միաձայն, առանց բացառության, աջակցեց այդ գաղափարին: Սա է, որ Հայաստանի որոշ գործիչներ եւ լրագրողներ չեն ցանկանում ընդունել: Փաստացի, որոշ մարդիկ ստում են իրենց ժողովրդին, քանի որ սա իմ նախաձեռնությունը չէ: Եվ հիմա ենթահանձնաժողովն ինքը պետք է որոշի՝ ինչ անել եւ ուր գնալ: Մենք որեւէ կողմում չենք, ենթահանձնաժողովում ես որեւէ իրավունք չունեմ ազդելու, չկա թուրք անդամ այդ ենթահանձնաժողովում, եւ հիմա ամեն ինչ կախված է բյուրոյից ու հենց այդ ենթահանձնաժողովից: Ես այս ամենի մեծ աջակիցը չեմ, դա սխալ է եւ ինձ չի մտահոգում՝ սա լուրջ կընդունեն թե ոչ, սա է փաստը:**

**- Հայ-թուրքական հարաբերությունների առումով: Թուրքիան անցավ խորհրդարանական ընտրությունները, եւ վարչապետ Էրդողանը կառավարություն ձեւավորեց: Ի՞նչ եք կարծում, կհրաժարվի արդյոք Թուրքիայի ներկայիս ղեկավարությունն արդեն հետընտրական շրջանում Հայաստանին առաջադրած նախապայմաններից:**

**- Ես չեմ կարծում, թե կփոխվի իրավիճակը, քանի որ պայմանը շատ հստակ է՝ Թուրքիան պահանջում է Հայաստանից դուրս բերել զինուժը օկուպացված հատվածից: Սա է Թուրքիայի վարչապետի խոսքը: Եվ եղել է համաձայնություն Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ արձանագրությունները ստորագրելիս: Եվ սա հաստատում են այլ նախարարներ, թեեւ սա չկա արձանագրություններում, քանի որ պայմանը վերաբերում է երրորդ կողմին՝ Ադրբեջանին: Հայաստանի արտգործնախարարը փորձում է ինձ մեղադրել, բայց ես հարցրել եմ ինձ հանդիպած արտգործնախարարներին, եւ բոլորը հաստատել են, որ Հայաստանը ընդունել է իր ուժերը դուրս բերել 5 շրջաններից, ոչ թե 7:**

**- Անգամ ոչ 1-2 շրջաններից, այլ՝ 5:**

**- Այո, հինգ շրջաններից: Հայաստանն այդուհետեւ առաջարկել էր Թուրքիային 5-ի փոխարեն 3 շրջան, այդուհետեւ բանակցել էին թվերի համար, բայց դա էլ չաշխատեց: Վերջնական համաձայնեցվել էր 5 շրջաններից զինուժի դուրսբերումը, եւ քանի որ ոչ մի շրջանից ուժերը դուրս չեն բերվել, դրա համար էլ Թուրքիայում արձանագրությունների վավերացում չեղավ: Ամեն դեպքում, Թուրքիան ցանկություն է հայտնում նորմալացնելու հարաբերությունները, բայց այդ պայմանով, որի առնչությամբ Թուրքիան հաստատակամ է: Լեռնային Ղարաբաղը այլ հարց է: ԵԱՀԿ Մինսկի խումբն է զբաղվում այդ հարցով:**

**- Կազանի հանդիպմանը որեւէ առաջընթացի պարագայում կարո՞ղ է փոխվել Թուրքիայի մոտեցումը, կամ հնարավո՞ր է հրաժարում նախապայմանների մոտեցումից:**

**- Ես լավատես եմ, ակնկալում եմ, որ գոնե նախնական համաձայնություն կլինի երկու լիդերների միջեւ: Լավագույն ուղին այն կլինի, որ այս հարցը լուծվի երկու լիդերների միջեւ, որոնք բանակցում են այնպես, ինչպես դա արվում է Կիպրոսի պարագայում: Խնդիրն այն է, թե ինչու են ուրիշները փորձում որոշում տալ, ինչու երկու հարեւան երկրների նախագահները չեն նստում ու համաձայնում, ինչը մեզ համար նախընտրելին է: Թուրքիայի մոտեցման փոփոխության առումով կախված կարող է լինել, թե ինչ կստորագրեն, բայց ես կարծում եմ, Թուրքիան լիովին կաջակցի 2 կողմերի միջեւ որեւէ համաձայնագրի:**

**- Որքանո՞վ է Ձեր լավատեսությունը հիմնավորված, երբ, Ձեր մոտեցմամբ, երկու կարեւոր լիդերներից մեկն անընդհատ խոսում է պատերազմից, շփման գծից դիպուկահարների հեռացման մասին պահանջներին չի արձագանքում, իսկ հայկական կողմը պատրաստակամություն է հայտնում փոխզիջումային իրավիճակի:**

**- Մենք պետք է ազնիվ լինենք. Ադրբեջանը միշտ չի ռազմական լուծման կոչ անում: Ադրբեջանն ասում է, որ եթե խաղաղ լուծում չլինի, ռազմական տարբերակը կդիտարկվի: Ադրբեջանը չի ասում, թե նախընտրում է ռազմական լուծումը: Եվ դուք պետք է դա հասկանաք, մենք պետք է դա հասկանանք: Ես ռազմական լուծման կողմնակից չեմ, բայց դա ռեակցիա է մի երկրից, որի տարածքի 20 տոկոսը օկուպացված է, դա ասում է վեհաժողովի բանաձեւը: Ես չեմ աջակցում ռազմական լուծմանը, բայց դա հասկանալի է, որ Ադրբեջանը բացարձակապես հիասթափված է բանակցությունների արդյունքներով: Ես՝ որպես վեհաժողովի անդամ, որպես թուրք խորհրդարանական, երբեք չեմ աջակցում ռազմական տարբերակին: Տեսեք, ինչ է տեղի ունենում Լիբիայում կամ Սիրիայում: Արյունահեղությունը խաղաղություն չի բերի: Հուսով եմ, այս հարցը կլուծվի խաղաղ միջոցներով:**

## Խորվաթիան ԵՄ անդամ կդառնա 2013-ի հուլիսին

ԵՄ երկրների ղեկավարները փոխըմբռնման են հասել Խորվաթիայի անդամակցության բանակցությունների ավարտման առնչությամբ: Այդ մասին հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, վկայակոչելով եվրոպական դիվանագիտական աղբյուրներ:

Դիվանագետներից մեկի խոսքերով՝ բանակցությունները կավարտվեն հունիսի վերջերին, մինչեւ տարեվերջ կստորագրվի Խորվաթիան ԵՄ կազմում ընդգրկելու պայմանագիր, իսկ մինչեւ 2013-ի հուլիսի 1-ը ԵՄ բոլոր անդամները պետք է ավարտեն դրա վավերացումը:

Տվյալ որոշման պաշտոնական հրապարակումից հետո մնացյալ արարողակարգը տեղի կունենա ինքնաբերաբար:

Առայժմ հստակություն չկա միայն Փարիզի այն պահանջի հարցում, որ ստեղծվի հսկողության մեխանիզմ, որը կհետեւեր Խորվաթիայում կաշառակերության դեմ մղվող պայքարի ընթացքին:

Պ.Ք.

# Հայկական շեռարվեստին նվիրված գրքի շնորհանդես

Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայում կայացավ **«Փայլ եւ շքեղություն. Ձեռագործ արվեստի գանձեր Պոլսո Հայ Առաքելական եկեղեցիներում»** նկարազարդ խոշորածավալ գրքի շնորհանդեսը: Այդ շատ արժեքավոր աշխատության հեղինակների՝ ԱՄՆ արեւմտյան Միչիգանի եւ Մինեսոտայի համալսարանների պրոֆեսորներ **Մարլեն Բրուի** եւ **Ռոնալդ Մարչեսի** հետ հանդիպումը կազմակերպել էին ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտը եւ «Ապագան քոնն է» հասարակական կազմակերպությունը: Շնորհանդեսը բացեց եւ նման աշխատություն իրականացնելը բարձր գնահատեց ակադեմիկոս **Վլադիմիր Բարխուդարյանը**, նշելով, որ գիրքն իր արժանի տեղը կգտնի հայկական ասեղնագործության պատմությունն ուսումնասիրողների շրջանում: Բազմահազար էջանոց նկարազարդ գիրքը նվիրված է բացառապես եկեղեցական ասեղնագործությանը: Այս թեման նման մասնագիտական խորությամբ առաջին անգամ է արծարծվում, եւ հեղինակները մեծապես կարեւորում են հայ ժողովրդի ներդրումը նյութական մշակույթի այս ոլորտում:




Անտիկ դարաշրջանի պատմության եւ հնէաբանության պրոֆեսոր Ռոնալդ Մարչեսը մանրամասնորեն ներկայացրեց ու ցուցապաստառի վրա ցույց տվեց Թուրքիայի Հանրապետությունում գործող 30 եկեղեցիների ծիսական զգեստները, որոնք մանրակրկիտ ուսումնասիրել են: Եվ այդ աշխատանքներում, որոնցից շատերն արված են եռակողմյան պատկերով, թանկարժեք քարերի, մետաքսե կտորների եւ արծաթ ու ոսկե թելերով, հաստատում են «Կոստանտինյան ոճը», որը գալիս է հաստատելու, որ շատ հարուստ հավաքածու կա այդ եկեղեցիներում, իր բնորոշ ազգային մանրանկարչությամբ, հայկական մակագրություններով: «Այդ հավաքածուն ունի մի հզոր էմոցիոնալ էներգետիկա, որը ֆիզիկական հիշողություն է այն նվիրատվությունների մասին, որոնք մարդիկ անում էին եկեղեցիներին: Հայկական նյութական մշակույթը Արեւմտյան Անատոլիայում նույնպես վկայում է այն մասին, որ մարդիկ սիրում էին իրենց քաղաքը, իրենց աշխատանքը եւ ծառայությունը եկեղեցուն», բացատրում էր Մինեսոտայի համալսարանի 30 տարիների ճանաչված պրոֆեսորը:

**«Ազգի»** հարցին պատասխանելով, ձեռագործ արվեստի եւ զգեստների հետազոտություններով զբաղվող պրոֆեսոր Մարլեն Բրուն ասաց. «Իհարկե այս արժեքավոր աշխատությունը որպես պատմական բարձրարժեք նմուշ շատ կհետաքրքրի հայագիտությամբ զբաղվողներին ու նաեւ հայագիտական ամբիոններին, որոնք Ամերիկայի համալսարաններում գործում են: Այս գիրքը յուրօրինակ հանրագիտարանային, պատմական տեղեկություններ է պարունակում»:

Ի դեպ նշենք, որ այս կարեւոր ու շատ արժեքավոր աշխատությունը լույս է տեսել անգլերեն եւ թուրքերեն լեզուներով: Այժմ բանակցություններ են ընթանում այն հայերենով տպագրելու շուրջը: Ինչպես նշում էին գրքի հեղինակները, Ստամբուլում շատ շուտով լույս կտեսնի «Հավատքի գանձեր. սուրբ մասունքներ եւ նմուշներ Ստամբուլի հայ եկեղեցիներում» իրենց մյուս աշխատությունը: Գրքի միակ օրինակը հեղինակները նվիրեցին ազգային ակադեմիային:

**Ս. Ս.**

# «Ոսկե ծիրանն» իր «կորիզով»

«Ոսկե ծիրան» 8-րդ երեւանյան կինոփառատոնին, որը կմեկնարկի հուլիսի 10-17-ը, այս տարի առաջին անգամ կմասնակցեն նաեւ երիտասարդ կինոռեժիսորները, որոնք ընդունելով փառատոնի տնօրենության առաջարկը՝ հանդես են գալու «Կորիզ» անվանակարգում: Իսկ թե ինչու կորիզ, **«Ազգի»** հարցին մրցութային ծրագրի կազմակերպիչները՝ ռեժիսորներ Արամ Շահբազյանը, Վարդան Հակոբյանը, Գագիկ Ղազարէն, Լուսինե Սարգսյանը եւ սցենարիստ Աստղիկ Սիմոնյանն ասացին. «Ամեն մի պտուղ ունի իր կորիզը, մենք էլ լինելով երիտասարդ սերնդի ներկայացուցիչ, մեր առաջին քայլերը կինոաշխարհում որոշեցինք անվանել «Կորիզ» եւ համարվում ենք «Ոսկե ծիրան» փառատոնի ապագա շարունակողները»:



«Կորիզ» անվանակարգում ընդգրկվել են 135 հայտերից ընտրված 25 կարճամետրաժ ֆիլմեր մինչեւ 30 րոպե, 18 երկրներից: Այդ անվանակարգի ժյուրիի նախագահն է պրոդյուսեր Թիերի Լենուվելը (Ֆրանսիա), անդամներ են ընտրվել ճանաչված կինոգետ Օլգա Շերվուդը (ՌԴ) եւ կանադահայ ռեժիսոր Կարինե Թորոսյանը: «Կորիզին» Իտալիայի, Պորտուգալիայի, Ֆրանսիայի, ՌԴ-ի, Շվեդիայի, Հոնդուրասի, Ֆինլանդիայի, Ավստրալիայի, Հունաստանի, Բելգիայի, Մարոկկոյի, Սինգապուրի երիտասարդ կինոռեժիսորների կողքին կցուցադրվեն Լուսինե Սարգսյանի «Ծաղկապար», Տաթեւ Իսախանյանի «Թեւավոր պատրանք» եւ Դիանա Կարդումյանի «Գալաթա» կարճամետրաժ ֆիլմերը (Հայաստան/Թուրքիա): Երիտասարդ կինոռեժիսորները, որոնք դիտել էին փառատոնին ներկայացված 135 ֆիլմերը, նշում էին, որ դրանցից ոչ բոլորն են լիարժեք, կան էքսպերիմենտալ, նաեւ թույլ ֆիլմեր, բայց կա կինոյի լեզու եւ հենց այդ լեզվին ծանոթանալու, կինոյի գաղտնիքները հասկանալու համար «Կորիզը» շատ լայն հնարավորություններ ու առաջխաղացումների դաշտ է իրենց համար՝ հատկապես սկսնակների: Թերեւս կարճամետրաժ ֆիլմ նկարելը շատ ավելի բարդ ու դժվարին խնդիր է, իսկ արտադրական առումով՝ հեշտ: «Կորիզում» հաղթողներին կտրվի համատեղ ֆիլմ նկարահանելու հնարավորություն Հայաստանում եւ կապահովեն տեխնիկայով:

**Ս. Ս.**

# Ալտի եւ թավջութակի փառատոնը կեզրափակվի Յակով Յակուլովի մասնակցությամբ

«Արվեստների պատկերասրահ» մշակութային հիմնադրամի եւ մշակույթի նախարարության աջակցությամբ անցկացվող Հենրիկ եւ Գերոնտի Թալալյանների անվան «Ալտի եւ թավջութակի» փառատոնին **«Ազգը»** անդրադարձել է: Եվ ահա հունիսի 26-ին Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահում կկայանա փառատոնի փակման համերգը՝ հայտնի կոմպոզիտոր, դիրիժոր Յակով Յակուլովի (ԱՄՆ) հեղինակային երեկոյով:

Յակով Յակուլովը ծնվել է Մոսկվայում, որտեղ սովորել է դաշնամուր եւ կոմպոզիցիա տեղի պետական կոնսերվատորիայում եւ Գնեսինների անվան ակադեմիայում: Յ. Յակուլովը հայ մեծ նկարիչ Գեորգի Յակուլովի (որի 100-ամյակը նշվեց Ազգային պատկերասրահում բացված նկարչի շուրջ 100 աշխատանքներով) թոռն է: Նա Բոստոնի համալսարանի երաժշտության դոկտոր է, պարգեւատրվել է «Կոմպոզիտորների, հեղինակների եւ հրատարակիչների ամերիկյան միության» ամենամյա 9 մրցանակներով: Հանդիսանում է ԱՄՆ-ի Ազգային երաժշտական ընկերության անդամ: Յակուլովը բազմիցս հանդես է եկել աշխարհի տարբեր բեմերում եւ նրա ստեղծագործությունները մշտապես հնչում են Գերմանիայի, Շոտլանդիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի փառատոներում: Երեւանյան անդրանիկ հեղինակային երեկոյի ընթացքում Յակով Յակուլովը (ԱՄՆ) հանդես կգա փառատոնի կամերային նվագախմբի հետ, Արամ Թալալյանի ղեկավարությամբ:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

## ՕՐԻՆԱՉԱՓԻ ՉԱՓԸ

# Սուպերսաքոներ կամ ...

Աղմկում-աղաղակում ենք՝ հա՜յ Սուպեր Սաքո, հա՜յ Արվին, հա՜յ խենթ Հաղպատ ու «Հաղպատ»-ներ: Ինչո՞ւ ենք զարմանում, բա ի՞նչ պիտի լինեն (չնայած սա էլ ՁԼՄ-ական «տաք» լուր չէ՝ ինչ-ինչ ժամանակ հետ գնացած՝ պեղած-հանած է): Սա շատ օրինաչափ հետեւանք է, «օրինաչափ»-ը չչակերտեցի, որովհետեւ ավելի քան...օրինաչափ է, որ այդպես էլ պիտի լինեին. չէ՞ որ մերօրյա կյանքի ամենագայթակղիչ ու շողշողուն ասպարեզը, որ մինչ ուղնուծուծը գրավել է ամեն գույնի՝ սեւից մինչ դեղին ու...ճերմակ մամուլ, դա շոու բիզնեսն է, որը բոլոր ամսագրերի ճակատին է, «Չէին սպասում»-ների դիտա ու կիզակետում, «Հայկո-Մկոների»... խորն ընդերքում, սերիալացունամիներում, ամենուր...Ամենուր նրանք են՝ իրենց պսպղուն ու «լեցուն» առօրյայով, շքեղագույն ապրուստ-կենցաղով, լիությա՜մբ, վայելքնե՜րով...Եվ պարզ չէ՞ ու իրո՞ք զարմանաք, որ մրցավազք-հրմշտոցն ահռելի էր լինելու՝ միջոցների մեջ անխտրական. դիրք չզիջելու մոլուցքը մոգոնել ու դեռ ինչե՜ր է մոգոնելու՝ անկախ գործընկերների իմիջից ու... ֆոներից... Այնպես որ, սա հանդուրժողականության «հյութեղ» պտուղներից ընդամենը մեկն է, հերթական մեկը, որը գերհաճույքով ծամում-որոճում են բոլորը. իրական ցավը չի երեւում: Ավելի ստույգ՝ ո՞նց երեւար. իրական ցավն անթեղված է ամենաթողության կույտերի թմբի տակ...

**ԼԵՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գորիս**

# Հայ-ամերիկյան համերգ՝ ի պատիվ Օրբելյանների ընտանիքի




Արամ Խաչատրյան համերգասրահում հունիսի 26-ին կկայանա հայ-ամերիկյան համերգ՝ ի պատիվ Օրբելյանների ընտանիքի: News.am-ի փոխանցմամբ՝ համերգն իր ներկայությամբ ու կատարումներով պատվելու է ՀՀ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր ու դաշնակահար Կոնստանտին Օրբելյանը: Որպես հրավիրյալ՝ դիրիժոր համերգին հանդես կգա նաեւ մաեստրոյի եղբորորդին՝ դիրիժոր Կոնստանտին Օրբելյան կրտսերը: Տոնական համերգին կմիանա նաեւ «Փարոս» կամերային երգչախումբը: Օրվա առիթով Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբը կհյուրընկալի ամերիկյան հայտնի Եյլի համալսարանի շրջանավարտների երգչախմբին, որի գեղարվեստական ղեկավարն ու դիրիժորը Ջեֆրի Դուման է: Հայ ու ամերիկացի երաժիշտները վաղվա համերգին հանդես կգան միասին: Ամերիկյան այս երգչախումբը հիմնադրվել է 1998-ին եւ կազմված է տարբեր մասնագիտություններ ունեցող շրջանավարտներից:

**Ի.Պ.**

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ**
**Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 21-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն**
**Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՊԸԾՁԲ-11/1**

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Արշակունյաց 7 հասցեում հայտարարում է գնում՝ պարզեցված ընթացակարգով: Պարզեցված ընթացակարգով գնման արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել կադաստրային քարտեզների կոնվերտացիայի և արտահանման ծրագրերի ստեղծման և մշակման ծառայությունների գնման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանում կադաստրային քարտեզների կոնվերտացիայի և արտահանման ծրագրերի ստեղծման և մշակման ծառայությունը:

ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կարիքների համար կադաստրային քարտեզների կոնվերտացիայի և արտահանման ծրագրերի ստեղծման և մշակման ծառայությունների մատուցման ավարտի ժամկետը նախատեսվում է մինչև 2011թ. օգոստոսի 31-ը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն՝ մրցույթի հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մասնակիցը պետք է բավարարի սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Սույն հայտարարության հիման վրա պատվիրատուին գրավոր պահանջ ներկայացրած անձն իրավունք ունի այդ պահանջը ներկայացվելու օրվա ընթացքում թղթային ձևով անվճար ստանալ սույն հրավերը, հրապարակման օրվանից սկսած յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 9:00 մինչև ժամը 18:00-ն, բայց ոչ ուշ քան հայտերի բացման օրը:

Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, Արշակունյաց 7, 3-րդ հարկ, գնումների կազմակերպման բաժին հասցեով, մինչև սույն հայտարարությունը տեղեկագրում («Գնումների էլեկտրոնային տեղեկատու») հրապարակելու օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 15:00 և դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով:

Հայտերը ներկայացվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի պայմանների համաձայն: Հայտերը կբացվեն հայտերի բացման նիստում՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին:

Պարզեցված ընթացակարգի հաղթողը կճանաչվի մասնակիցների բավարար գնահատված հայտերից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի պայմանների համաձայն մրցույթի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների բողոքարկման խորհուրդ (Գնումների աջակցման կենտրոն, հասցեն՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ), «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետում:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ մրցույթի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն մրցույթի հրավերով նախատեսված փաստաթղթերը:

***ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե***

# Տիգրան Քոթանջյանը կրկնեց նախորդ տարվա հաջողությունը

Ջերմուկում վերջնագիծը հատեց Կարեն Ասրյանի շախմատի 4-րդ հուշամրցաշարը, որին մասնակցեցին Հայաստանը, Վրաստանը, Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Իրանը եւ Ղազախստանը ներկայացնող 71 շախմատիստներ: Բոլորից հաջող հանդես եկավ ու 2-րդ տարին անընդմեջ հուշամրցաշարի հաղթող ճանաչվեց Տիգրան Քոթանջյանը, որը 9 հնարավորից վաստակեց 7 միավոր: Քոթանջյանը արժանացավ գլխավոր մրցանակին՝ 3000 դոլար պարգեւավճարին:

Ավարտական տուրից առաջ Քոթանջյանը 6,5 միավորով միանձնյա գլխավորում էր մրցաշարային աղյուսակը: Հայ գրոսմայստերը կես միավորով առաջ էր անցել ռուսաստանցի Մաքսիմ Տուրովից եւ վրացի Կոնստանտին Շանավայից: 1-ին տեղի համար պայքարում վճռորոշ եղավ Մաքսիմ Տուրովի եւ Տիգրան Քոթանջյանի մրցավեճը, որում հայ շախմատիստը սեւերով իր օգտին կես միավոր գրանցեց: Դա էլ բավական էր 1-ին տեղը զբաղեցնելու համար, քանի որ Կոնստանտին Շանավան էլ հաշտություն կնքեց Ռոբերտ Հովհաննիսյանի հետ:



Տիգրան Քոթանջյանը վստահ անցկացրեց ողջ մրցաշարը: Նա մրցաշարը սկսեց 3 անընդմեջ հաղթանակով՝ առավելության հասնելով Հայկ Թամազյանի, Արման Հայրապետյանի եւ Նիկիտա Մաթինյանի նկատմամբ: 4-րդ տուրում Տիգրանն առաջին ու միակ պարտությունը կրեց՝ զիջելով Միխայիլ Ուլիբինին: Դրանից հետո Քոթանջյանը կրկին 3 անընդմեջ հաղթանակ տոնեց՝ պարտության մատնելով Հովհաննես Գաբուզյանին, Աշոտ Նադանյանին եւ Կոնստանտին Շանավային: Վերջին հաղթանակը շատ կարեւոր էր հայ շախմատիստի համար, որը շրջանցելով Շանավային, գլխավորեց մրցաշարային աղյուսակը՝ առաջատարի դիրքն այլեւս չզիջելով ոչ մեկին:

Կոնստանտին Շանավան, Մաքսիմ Տուրովը, Միխայիլ Ուլիբինը, Ռոբերտ Հովհաննիսյանն ու Լեւոն Բաբուջյանը վաստակեցին 6,5-ական միավոր: Ուլիբինը հաղթեց Դավիթ Մագալաշվիլուն, Բաբուջյանն առավելության հասավ Էլշան Մորադիաբադիի նկատմամբ: Լրացուցիչ գործակիցներով 2-րդ տեղը գրավեց վրացի գրոսմայստեր Կոնստանտին Շանավան՝ պարգեւատրվելով 2000 դոլարով: 3-րդ մրցանակակիր դարձավ Մաքսիմ Տուրովը՝ ստանալով 1500 դոլար: Հաջորդ տեղերը զբաղեցրին Ուլիբինը, Հովհաննիսյանն ու Բաբուջյանը, որոնք պագեւատրվեցին համապատասխանաբար 1200, 1000 եւ 500 դոլարով:

Մրցաշարին մասնակցած շախմատիստուհիներից լավագույն արդյունքի հասավ ռուսաստանցի Իրինա Տուրովան, որը վաստակեց 5,5 միավոր: Նա պարգեւատրվեց 800 դոլարով: 2-րդ եւ 3-րդ տեղերը զբաղեցրին 5-ական միավոր վաստակած ռուսաստանցի գրոսմայստեր Մարիա Կուրսովան եւ վրացի գրոսմայստեր Նինո Բացիաշվիլին, որոնք պարգեւատրվեցին համապատասխանաբար 500 եւ 200 դոլարով: Հատուկ դրամական պարգեւներ էին սահմանվել նաեւ մինչեւ 16 տարեկան մասնակիցների համար: Այստեղ լավագույն արդյունքը ցույց տվեց իրանցի ՖԻԴԵ-ի վարպետ Պոույա Իդանին՝ 9 հնարավորից վաստակելով 6 միավոր: Նա մրցաշարում զբաղեցրել էր 8-րդ հորիզոնականը: Իրանցի շախմատիստը պարգեւատրվեց 500 դոլարով: 300 դոլար ստացավ ռուսաստանցի Դանիլ Դուբովը, որը եւս 6 միավոր էր վաստակել ու զբաղեցրել էր 10-րդ տեղը: 200 դոլար հանձնվեց Հովհաննես Գաբուզյանին, որը 5,5 միավորով գրավել էր 16-րդ տեղը: Երկու վետերաններից լավագույն արդյունքի (3,5 միավոր) հասած Էդուարդ Մնացականյանը ստացավ 300 դոլար: Իր հնարավորությունից ցածր հանդես եկավ մրցաշարի մասնակիցներից ամենաբարձր վարկանիշն ունեցող Արման Փաշիկյանը (2643), որը 5 միավորով գրավեց 29-րդ տեղը:

# Սարուխանյանը բավարարվեց բրոնզե մեդալով

Հայ բռնցքամարտիկներից պայքարը շարունակող մեր միակ ներկայացուցիչ Վլադիմիր Սարուխանյանն էլ ավարտեց ելույթներն Անկարայում ընթացող Եվրոպայի առաջնությունում: Մեր բռնցքամարտիկին կիսաեզրափակիչում չհաջողվեց առավելության հասնել թուրք Ֆաթիհ Կելեսի նկատմամբ (16-28):

Այսպիսով, Սարուխանյանը բավարարվեց բրոնզե մեդալով, որը մեր հավաքականի միակ պարգեւն էր Անկարայում: Վերջին տարիներին եվրոպական ռինգում հայ բռնցքամարտիկները նման համեստ արդյունք չէին ցույց տվել:



ՖՈՏՈԼՈՒՐ

Եվրոպայի առաջնությունում հաջող են հանդես գալիս ռուսաստանցի բռնցքամարտիկները: Կիսաեզրափակիչում հանդես եկած 6 բռնցքամարտիկներն էլ հաջողությամբ հաղթահարեցին հերթական փուլի արգելքը եւ մտան եզրափակիչ: Առաջինն այդ պատվին արժանացավ Գեորգի Բալակշինը (52 կգ)՝ հաղթելով իտալացի Վինչենզո Ռիկարդոյին (27-19):

Մինչեւ 81 կգ քաշայինների մրցավեճում Նիկիտա Իվանովը պարտության մատնեց խորվաթ Հրվոջե Սեպին (32-20): Եզրափակիչի ուղեգիր նվաճեց նաեւ Մագոմեդ Օմարովը, որը 2-րդ ռաունդում պարտության մատնեց Միխեիլ Բախտիձեին:

Եվրոպայի չեմպիոնի տիտղոսի համար կպայքարի նաեւ Բելիկ Գալանովը, որն առավելության հասավ բուլղարացի Գեորգի Անդոնովի նկատմամբ (18-7): Հաջող էր նաեւ Դմիտրի Պոլյանսկու ելույթը, որը պարտության մատնեց թուրք Ուլաս Մեմիսին (18-8): Մինչեւ 75 կգ քաշային կարգում էլ եզրափակիչում Ռուսաստանը կներկայացնի Մաքսիմ Կորոտկովը, որը հաղթեց ուկրաինացի Դմիտրի Միտրոֆանովին (26-11):

# Աբրամովիչը 15 մլն եվրո կվճարի նոր գլխավոր մարզչի համար

Պորտուգալական «Պորտոյի» գլխավոր մարզիչ Անդրե Վիլաշ-Բոաշը նոր մրցաշրջանում կգլխավորի Լոնդոնի «Չելսին»: Ռոման Աբրամովիչը համաձայն է 15 մլն եվրո վճարել «Պորտոյին» գլխավոր մարզչի հետ պայմանագրի վաղաժամ խզման համար: «Պորտոյի» նախագահ Պինտա դա Կոստան էլ հայտարարել է, որ չի խոչընդոտի 33-ամյա մարզչի տեղափոխմանը, եթե նշված գումարն ամբողջությամբ վճարվի: Հենց այդպիսի գումար է նշված մարզչի պայմանագրում:

Անդրե Վիլաշ-Բոաշը համարվում է Ժոզե Մոուրինյոյի սան: Նրա հետ նա աշխատել է «Պորտոյում», «Չելսիում» եւ «Ինտերում»: Որպես գլխավոր մարզիչ Վիլաշ-Բոաշն ինքնուրույն սկսել է աշխատել 2009-ից: Հոկտեմբերի 14-ին նա նշանակվեց Կոիմբրայի «Ակադեմիկի» գլխավոր մարզիչ: Երիտասարդ մասնագետին հաջողվեց պահպանել թիմի տեղը Պորտուգալիայի առաջնությունում: Իսկ 2010-ի հունիսին նա պայմանագիր կնքեց «Պորտոյի» հետ, որի գլխավորությամբ թիմն այս տարի դարձավ Պորտուգալիայի գավաթակիր, Սուպերգավաթակիր եւ չեմպիոն, նվաճեց Եվրոպայի լիգայի գավաթը: Թիմում աշխատելու առաջին իսկ տարում նրան հաջողվեց կրկնել «Պորտոյի» 23-ամյա վաղեմություն ունեցող նվաճումը:

Օրերս Անդրե Վիլաշ-Բոաշն առաջարկ էր ստացել գլխավորելու իտալական «Միլանը», սակայն մերժել էր:

ՖՈՒՏԲՈԼ

# Պատանիները ջախջախեցին հյուսիսիռլանդացիներին

**Բուլղարիայի Պրավեց քաղաքում ընթացող ֆուտբոլի միջազգային մրցաշարում Հայաստանի մինչեւ 17 տարեկանների պատանեկան հավաքականը 2-րդ խաղում 4-1 հաշվով պարտության մատնեց Հյուսիսային Իռլանդիայի ֆուտբոլիստներին: Մեր թիմից գոլերի հեղինակներ դարձան Էդուարդ Ավագյանը, Վարդան Բակալյանը, Համլետ Ասոյանը (11 մ) եւ Նարեկ Պետրոսյանը: Տուրի մյուս խաղում Բուլղարիայի եւ Ռումինիայի հավաքականները հանդիպումն ավարտեցին ոչ-ոքի (1-1):**

**2 տուրից հետո 4-ական միավորով աղյուսակը գլխավորում են Ռումինիայի եւ Բուլղարիայի հավաքականները: ՀՀ հավաքականն ունի 3 միավոր: Աղյուսակը եզրափակող հյուսիսիռլանդացիները դեռեւս միավոր չեն վաստակել: Մրցաշարի վերջին տուրը կկայանա այսօր: Մեր պատանիները կմրցեն բուլղարացիների հետ, իսկ Ռումինիայի հավաքականի մրցակիցը կլինի Հյուսիսային Իռլանդիայի ընտրանին:**

# Նալբանդյանին լուրջ փորձություն է սպասում

**Դավիթ Նալբանդյանը հաջողությամբ հաղթահարեց նաեւ Ուիմբլդոնի մրցաշարի 2-րդ փուլի արգելքը: Նա 4 խաղափուլում առավելության հասավ ավստրիացի Անդրեաս Խայդեր-Մաուրերի նկատմամբ (6-3, 3-6, 6-4, 6-4): Հաջորդ փուլում արգենտինահայ թենիսիստին չափազանց լուրջ փորձություն է սպասում: Նա հանդիպելու է շվեյցարացի Ռոջեր Ֆեդերերի հետ: Վերջինս 2-րդ փուլում պայքարից դուրս էր մղել ֆրանսիացի Ադրիան Մանարինոյին (6-2, 6-3, 6-2):**



**2-րդ փուլի արգելքն էլ հաջողությամբ հաղթահարեց մրցաշարի հաղթողի գլխավոր հավակնորդներից մեկը՝ իսպանացի Ռաֆայել Նադալը, որը պարտության մատնեց ամերիկացի Ռայան Սվիտինգին (6-3, 6-2, 6-4): Նովակ Ջոկովիչը, որը հաջողության դեպքում միայն եզրափակիչում կարող է հանդիպել Նադալի հետ, հաղթեց Քեւին Անդերսոնին (6-3, 6-4, 6-2):**

**Ուժեղագույն թենիսիստներից պայքարը շարունակում են նաեւ Խուան Մարտին Դել Պոտրոն, Էնդի Մարեյը, Իվան Լյուբիչիչը, Ռիշար Գասկեն, Ֆեռնանդո Գոնսալեսը, Մարկոս Բագդատիսն ու Ռոբին Սոդերլինգը:**

**Կանանց մրցապայքարում անհաջողության մատնվեց չինացի Լի Նան, որը մեծ անակնկալ էր մատուցել «Ռոլան Գարոսում»՝ նվաճելով գլխավոր մրցանակը: Նա պարտվեց Գերմանիան ներկայացնող Սաբինա Լիսիցկուն (6-3, 4-6, 6-8): Մարիա Կիրիլենկոն պարտության մատնեց Տամարին Տանասուգարնին (7-5, 7-5): Պայքարը շարունակողների թվում են Վերա Զվոնարյովան, Վինուս Ուիլյամսը, Դանիելա Հանտուխովան, Վիկտորիա Ազարենկոն ու Նադեժդա Պետրովան:**

# Սուրեն Պետրոսյանը դարձյալ հաշտություն կնքեց

**Ռումինիայի Էֆորիա քաղաքում ընթացող շախմատի մրցաշարի 4-րդ տուրում Սուրեն Պետրոսյանը կրկին ոչ-ոքի խաղաց: Նրա մրցակիցը միջազգային վարպետ Կոստին-Լուկիան Միրոնն էր: 4 տուրից հետո Պետրոսյանը 3 միավորով 6 շախմատիստների հետ բաժանում է 4-10-րդ տեղերը:**

**4-րդ տուրից հետո մրցաշարում եռիշխանություն հաստատվեց: 3,5-ական միավորով աղյուսակը գլխավորում են Հոլանդիան ներկայացնող Սերգեյ Տիվյակովը, Բելգիայում բնակվող Վադիմ Մալախատկոն եւ ռուսաստանցի Ալեքսեյ Գավրիլովը: Մալախատկոն հաշտություն կնքեց Ալեքսեյ Ֆյոդորովի հետ: Տիվյակովը հաղթեց Կորինա-Իզաբելա Պեպտանին, իսկ Գավրիլովը պարտության մատնեց Ելենա-Լումինիտա Կոսմային:**

**5-րդ տուրում Սուրեն Պետրոսյանը կմրցի Մարիուս Մանոլաչեի հետ: Ուշադրության կենտրոնում կլինեն նաեւ Մալախատկո-Տիվյակով, Բադեա-Գավրիլով պարտիաները:**

# Լիլիթ Մկրտչյանը կրկին պարտվեց

**Մեկօրյա հանգստից հետո Դյորդ Մարոսի 9-րդ հուշամրցաշարի մասնակիցները կրկին նստեցին խաղասեղանների շուրջ՝ անցկացնելով 6-րդ տուրի հանդիպումները, որոնցով սկսվեց 2-րդ շրջանը: Լիլիթ Մկրտչյանը, որ նախորդ տուրում Ալինա Կաշլինսկայայից անդրանիկ պարտությունն էր կրել ու վերջինիս զիջել էր առաջատարի դիրքը, կրկին անհաջողության մատնվեց: Նրա մրցակիցն Իլդիկո Մադլն էր:**

**Այսպիսով, 6 տուրից հետո Լիլիթը 3 միավորով Իլդիկո Մադլի, Աննա Շարեւիչի եւ Աննա Ռուդոլֆի հետ բաժանում է 2-5-րդ տեղերը: Իսկ ահա Ալինա Կաշլինսկայան հաղթելով Էսթեր Դուդասին, վաստակեց 4,5 միավոր եւ ավելի ամրապնդեց առաջատարի իր դիրքը: 7-րդ տուրում Մկրտչյանը սպիտակներով կխաղա Աննա Ռուդոլֆի հետ: Կաշլինսկայայի մրցակցուհին կլինի Իլդիկո Մադլը:**

# Մակեդոնացիների գլխավոր մարզիչը պաշտոնանկ արվեց

**Ֆուտբոլի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում Հայաստանի հավաքականի մրցակիցներից մեկի՝ Մակեդոնիայի ընտրանու գլխավոր մարզիչ Միրսադ Յոնուզը հեռացվել է պաշտոնից: Պատճառն ընտրական մրցաշարում մակեդոնացիների անհաջող մրցելույթն է: Ընտրական մրցաշարում Մակեդոնիայի հավաքականը 6 հանդիպումներում ընդամենը մեկ հաղթանակ է տոնել՝ պարտության մատնելով Անդորրայի ֆուտբոլիստներին: Հայաստանի հավաքականի հետ սեփական հարկի տակ կայացած խաղում էլ մակեդոնացիները միայն ավելացված ժամանակում 11 մ հարվածով խփած գոլի շնորհիվ խուսափեցին պարտությունից:**

**Միրսադ Յոնուզը Մակեդոնիայում հայտնի անձնավորություն է: Նա վաս դարպասապահ չէր, հասցրել է հանդես գալ դեռեւս Հարավսլավիայի առաջնությունում Բելգրադի «Ռադ», «Նովի Պազար» եւ «Վարդար» թիմերում: Հարավսլավիայի փլուզումից հետո նա պաշտպանել է Չեռնոգորիայի «Սուտիեսկիի», «Ռադի» եւ հունական «Լեւադիակոսի» դարպասները: Ֆուտբոլիստի կարիերան ավարտել է Սկոպիեի «Ռաբոտնիչկիում»: Ակումբի ղեկավարությունը նրան առաջարկեց մնալ թիմում որպես գլխավոր մարզիչ: Մարզական գործունեության առաջին տարիները շատ լավ դասավորվեցին Յոնուզի համար: Երկու անգամ նա ճանաչվեց տարվա լավագույն մարզիչ: Հետագայում Յոնուզին վստահեցին երկրի երիտասարդական հավաքականը, որտեղից էլ նա հրավիրվեց ազգային ընտրանի՝ փոխարինելով սլովենացի մասնագետ Սրեչկո Կատանեցին:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

**Վաճառվում է**
**Volkswagen Jetta**

մակնիշի ավտոմեքենա, արծաթափայլ, արտ. 2000 թ., վաճ. 2001 թ., շարժիչը 2 լ., փոխանց. տուփը ավտոմատ, սրահը կաշվեպատ, դիմացի նստատեղերը տաքացվող, հայելիները, լյուկը եւ ապակիները (մգեցված) էլեկտր., ունի կոնդիցիոներ: Գերազանց վիճակ: 095 02 66 19:

**Վաճառվում է**
**Daewoo Matiz Best**

մակնիշի ավտոմեքենա 2008 թ., շարժիչը 1լ, վազքը՝ 3 600 կմ, արծաթագույն, ունի կոնդիցիոներ, հայելիները եւ ապակիները էլեկտր., գերազանց վիճակ է:
**Հեռ.՝ (094) 577-578**

**Տեղադրեք եւ ընթերցեք անվճար հայտարարություններ www.vdv.am կայքում**




## ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

*Ձեւ N 1*

**առ 01 հունվարի 2011 թ.**

| | | |
|---|---|---|
| | | ծածկագիրը |
| Կազմակերպության անվանումը | «Հրազդան կենտրոնական մարզադաշտ» ՓԲԸ | |
| Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակներ | 1. Առեւտրի իրականացման վայր<br>2. Մարզական միջոց. կազմակերպում | |
| Պետական ռեգիստրում գրանցման համարը | | 290.120.02146 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 01823524 |
| Չափի միավորը | | Հազար դրամ |
| Գտնվելու վայրը | ք. Երեւան, Հրազդանի կիրճ 4/1 | |
| Փաստացի | | հեռ.՝ 010-58-72-21 |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | 6758272 | 6611773 |
| Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | 020 | 29744 | 29744 |
| Ոչ նյութական ակտիվներ | 030 | 583 | 583 |
| Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | 050 | 1231236 | 1460440 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվ | 080 | 8019835 | 8102540 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Նյութեր | 090 | 41628 | 48670 |
| Արագամաշ առարկաներ | 110 | 241 | 241 |
| Ապրանքներ | 140 | 133 | 79 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 150 | 3729 | 3540 |
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 160 | 1562 | 7077 |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | 1025 | |
| Այլ դեբիտորական պարտքեր | 180 | 4737 | 467 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | 3548 | 7187 |
| Այլ ընթացիկ ակտիվներ , այդ թվում՝ | 210 | 1071 | 399 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ՝ | 220 | 57674 | 67660 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 230 | 8077509 | 8170200 |

| ՊԱՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (Բաժնեհավաք) | | | |
| Կապիտալի զուտ գումար | 240 | 1031121 | 1031121 |
| Կուտակված շահույթ | 270 | 161559 | 2161 |
| Պահուստային կապիտալ | 280 | 30947 | 30947 |
| Սեփական կապիտալի այլ տարրեր,այդ թվում՝ | 290 | 124019 | 124019 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | 1347646 | 1188248 |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր եւ փոխառություններ | 310 | 1048450 | 1308773 |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 330 | 5558037 | 5558037 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 360 | 6606487 | 6866810 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 390 | 8044 | 6860 |
| Ստացած ընթացիկ կանխավճարներ | 400 | 54648 | 1046 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | 53075 | 102920 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր սոց. Ապ. Գծով | 420 | 5025 | 4001 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 450 | 2584 | 315 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 123376 | 115142 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 500 | 8077509 | 8170200 |

*Ղեկավար՝ Գ. ԺԱՄՀԱՐՅԱՆ*
*Գլխավոր հաշվապահ՝ Շ. ՍԱՐԳՍՅԱՆ*

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**2010 թ.**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, | | | |
| ծառայությունների իրացման հասույթ | 010 | 2224541 | 1602510 |
| իրացված արտադրանքների, ապրանքների, աշխտանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | (6341) | (5860) |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 2218200 | 1596650 |
| Իրացման ծախսեր | 040 | (31520) | (24125) |
| Վարչական ծախսեր | 050 | (799282) | (459494) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների Իրացումից շահույթ (վնաս) | 060 | 1387398 | 1113031 |
| Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝ | 070 | 48992 | 107567 |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝ | 080 | (153) | (76469) |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | 1436237 | 1144129 |
| Ֆինանսական ծախսեր | 100 | (156708) | (136425) |
| Այլ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝ | 130 | (101807) | |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | 1177722 | 1007704 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | 1177722 | 1007704 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 170 | 12487 | 216420 |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | 1165235 | 791,284 |

*Ղեկավար՝ Գ. ԺԱՄՀԱՐՅԱՆ*
*Գլխավոր հաշվապահ՝ Շ. ՍԱՐԳՍՅԱՆ*

## ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հրազդան Կենտրոնական Մարզադաշտ» ՓԲԸ

Մենք ստուգել ենք «Հրազդան Կենտրոնական Մարզադաշտ» ՓԲ ընկերության 2010 թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաեւ հաշվապահական հաշվառման վարման կարգը:

Ընկերության ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ճշգրիտ հաշվապահական հաշվառման համակարգ պահելու եւ յուրաքանչյուր տարվա ֆինանսական հաշվետվությունները նախապատրաստելու համար:

Մեր պատասխանատվությունն է կատարված աուդիտի հիման վրա այդ հաշվետվությունների վերաբերյալ արտահայտել անկախ կարծիք:

Աուդիտն իրականացվել է գործող աուդիտորական ստանդարտների համաձայն: Այս ստանդարտները պահանջում են, որպեսզի մենք այնպես պլանավորենք եւ կատարենք մեր աուդիտը՝ հիմնավոր կերպով համոզվելու համար, որ ֆինանսական հաշվետվություններում չկան էական խախտումներ, որոնք առաջացել են կեղծիքի կամ այլ սխալների հետեւանքով: Ֆինանսական ինֆորմացիայի ստուգումը նշանակում է հաշվետվության պատրաստման համալիր ընկալման հասնելը, ֆինանսական տվյալների վերլուծությունը, ինչպես նաեւ ներառում է ֆինանսական եւ հաշվապահական աշխատանքների պատասխանատուների հարցումը: Աուդիտն իր մեջ ընդգրկում է ընտրանքային կարգով իրականացված այն փաստաթղթերի հաշվեքննումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվությունների գումարները, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների տեղեկատվության բացահայտումները: Աուդիտը նաեւ ներառում է հաշվապահական սկզբունքների գնահատումը, ղեկավարության կողմից կատարվող գնահատումները եւ ֆինանսական հաշվետվության ներկայացման գնահատումը: Մենք վստահ ենք, որ մեր կողմից իրականացված աուդիտը բավարար հիմք է մեր կարծիքի ձեւավորման համար:

Եզրակացություն

Մեր կարծիքով, ընկերության ֆինանսական հաշվետվությունները ճշմարտացիորեն են արտացոլում ընկերության ֆինանսական վիճակը եւ գործունեության արդյունքները 2010 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, համաձայն ՀՀ Հաշվապահական Հաշվառման ստանդարտների:

**23 հունիսի, 2011 թ.**

***Տնօրեն***
***Որակավորված աուդիտոր՝*** ***ԳՈՌ ԴԱՎԹՅԱՆ***
***Որակավորված աուդիտոր՝*** ***Ս. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ***

## ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

*Ձեւ N 1*

**առ 01.01.2011 թ.**

| | | |
|---|---|---|
| Կազմակերպության | | ծածկագիրը |
| անվանումը | «Մասիս Իմպորտ-Էքսպորտ» ՍՊԸ | 39350650 |
| Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները | Մեծածախ եւ մանրածախ առեւտուր | |
| Պետական ռեգիստրում գրանցման համարը | | 77.110.01136 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 3811748 |
| Չափի միավորը | | հազ. դրամ |
| Գտնվելու վայրը | ք. Մասիս, Գործարանային 14 | հեռ.՝ 28-17-62 |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | ք. Մասիս, Գործարանային 14 | հեռ.՝ 28-17-62 |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 150 | | 359083 |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | | 66 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | | 67724 |
| Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | 210 | | 16 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | | 426889 |
| Հաշվեկշիռ | 230 | | 426889 |

| ՊԱՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կուտակված շահույթ | 270 | | 109441 |
| Պահուստային կապիտալ | 280 | | 75 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | | 109516 |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր եւ փոխառություններ | 310 | | 2950 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 360 | | 2950 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 390 | | 224010 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 400 | | 65426 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | | 24633 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով | 420 | | 53 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 430 | | 301 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | | 314423 |
| Հաշվեկշիռ | 500 | | 426889 |

*Ղեկավար՝* ***ԷԴՈՒԱՐԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ***
*Գլխավոր հաշվապահ՝* ***ՌՈՒԶԱՆՆԱ ԱՎԱԼՅԱՆ***

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Ձեւ N 2*

**2010 թ.**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | | 1212579 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների | 020 | | (1064052) |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | | 148527 |
| Վարչական ծախսեր | 050 | | (9833) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | | 138694 |
| Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝ | 070 | | 52 |
| - այլ | 072 | | 52 |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝ | 080 | | (1541) |
| - այլ | 082 | | (1541) |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | | 137205 |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս) | 130 | | 20 |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | | 137225 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | | 137225 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 170 | | (27709) |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | | 109516 |

*Ղեկավար՝* ***ԷԴՈՒԱՐԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ***
*Գլխավոր հաշվապահ՝* ***ՌՈՒԶԱՆՆԱ ԱՎԱԼՅԱՆ***

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ «Մասիս Իմպորտ-Էքսպորտ» ՍՊԸ-ի մասնակցին

Մենք անկախ աուդիտի ենք ենթարկել «Մասիս Իմպորտ-Էքսպորտ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 31 դեկտեմբեր 2010 թ. դրությամբ տարեկան հաշվապահական հաշվեկշիռը, ինչպես նաեւ՝ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները: Այդ ֆինանսական հաշվետվութունների կազմման համար պատասխանատու է ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի ստանդարտներին (աուդիտի ազգային ստանդարտներին եւ գործնական փորձին) համապատասխան: Համաձայն այդ ստանդարտների պահանջվում է, որ մենք աուդիտը նախագծենք եւ իրականացնենք ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալների եւ բացահայտումների բաղադրիչների հետազոտումը՝ թեսթային հիմունքներով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, ընկերության ղեկավարության կողմից իրականացվող կառավարման եւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների ընթացքում հավաքագրվել են բավարար եւ իրական տեղեկություններ, որոնց արդյունքները հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով, 2010 թ. տարեկան հաշվապահական հաշվեկշիռը, ինչպես նաեւ՝ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավատ են եւ տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը Ընկերության ֆինանսական վիճակի մասին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Հաշվապահական հաշվառման ստանդարտների:

***Բաժնետեր Գլխավոր տնօրեն՝*** ***Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ***
***Բաժնետեր Աուդիտոր՝*** ***Խ. ԲԵԳԼԱՐՅԱՆ***

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 23.6.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: